Տեղական ինքնակառավարման մարմիններ	<ul style="list-style-type: none"> • Համայնքապետարաններ 	<ul style="list-style-type: none"> • Տեղական մակարդակում աջակցության տրամադրում, օրինակ՝ օգնելու հասնել հետազոտության այնպիսի վայրեր, որտեղ դժվար է հասնել • Արձանագրություն՝ վայրի կենդանիների տեղաշարժերի կամ թվի անսովոր աճի համար • Արձանագրություն՝ գրանցելու կենդանիների մահացության ցուցանիշները • Ներգրավվում արտակարգ իրավիճակներում և կարանտինում 	
Այլ	<ul style="list-style-type: none"> • ՀԿ-ներ 	<ul style="list-style-type: none"> • Անձնակազմի բավարար թվով անդամների բացակայության դեպքում ՀԿ-ները կարող են օգնություն տրամադրել անձնակազմի և կամավորներին, որոնք աշխատում են աշխատանքային խմբերում • Բջջային հավելվածի տեղադրում՝ հետևալու թիրախային վայրի կենդանիներին • Վայրի կամ ընտանի կենդանիների մահացության դեպքերի բարձր մակարդակի ամրագրում 	<ul style="list-style-type: none"> • Տեղեկատվության լայնամասշտաբ տարածում

9 ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Հաշվի առնելով նոր առաջացող և վերադարձող հիվանդությունների, օրինակ՝ COVID-19-ի բարձր ծախսատարությունը՝ ի լրումն էնդեմիկ հիվանդությունների մշտական բեռի, Հայաստանի Հանրապետությունը միայն կշահի, եթե ներդրումներ արվեն «Մեկ առողջություն» բազմոլորտ մոտեցման մեջ՝ ուժեղացնելու գոտնոգ հիվանդությունների կենսահսկողությունն ու կենսապաշտպանությունը: Զոտնոգ հիվանդությունների բռնկումների կանխարգելման և դրանց արձագանքման բազմոլորտ մոտեցմամբ կարելի է լավագույնս օգտագործել տարբեր ոլորտների սահմանափակ ռեսուրսները, գումարը և անձնակազմին՝ բարելավելով գոտնոգ հիվանդությունների կառավարման ազդեցությունն ու արդյունավետությունը: Այս մոտեցմամբ առաջարկվում է նաև սիներգիա և համակարգում ոլորտների միջև, ինչն օգնում է ընդլայնել հնարավորությունները և արդյունավետությունը հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման, արձագանքման և վերականգնման գործում՝ միաժամանակ խուսափելով առաջադրանքների կրկնակի կատարումից, ինչի շնորհիվ, ի վերջո, խնայվում են ֆինանսական միջոցները¹²: Վերջին հետազոտությունները ցույց են տվել,

որ հիվանդությունների կանխարգելման նպատակով «Մեկ առողջության» համար ներդրումները, նույնիսկ հիվանդությունների առաջացման ռիսկի չափավոր կրճատման դեպքում, պահանջում են ամեն տարի առաջացող վիրուսային գոտնոգ հիվանդությունների արդյունքում կորցրած կյանքների արժեքի ընդամենը 1/20-ը և տարեկան տնտեսական կորուստների 1/10-ը¹⁴: Նմանատիպ այլ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համաճարակների կանխարգելման ծախսերը (անտառահատումների կանխարգելման, վայրի կենդանիների առևտրի կարգավորման և հիվանդությունների վաղ հայտնաբերման համակարգերի ընդլայնման տեսքով) զգալիորեն գերազանցում են գոտնոգ հիվանդությունների համաճարակների բռնկումների առաջացրած ծախսերը^{15, 16}:

Ավելին, գոտնոգ հիվանդությունների դեմ ժամանակին պայքարը ծախսարդյունավետ է և կյանքեր է փրկում¹²: SARS-CoV-2-ի շարունակական բռնկումը ցույց տվեց, որ երբ համավարակները տարածվում են, դրանց դեմ պայքարելու ծախսերը նույնպես աճում են երկրաչափական պրոգրեսիայով: Կան ուղղակի և անուղղակի ծախսերի շրջանակներ, որոնք գոյանում են հիվանդության բռնկման ժամանակ (Աղյուսակ 4):

Առողջապահության նախարարությունը զեկուցել է, որ 2020 թվականին COVID-19-ի դեմ պայքարի համար ծախսվել է շուրջ 26. 5 տրիլիոն դրամ, և, ինչպես բոլոր երկրները, Հայաստանը նույնպես զգալի անուղղակի ծախսեր է կրել¹⁷: Հայաստանը նաև 260 միլիոն դոլարի աջակցություն է ստացել Համաշխարհային բանկից, ԱՄՆ-ից և եվրոպական երկրներից¹⁸:

Հայաստանում COVID-19-ի պատճառով սահմանափակումները հանգեցրեցին համախառն ներքին արդյունքի 7,6 տոկոսով նվազեցմանը 2020 թվականին¹⁹: COVID-19-ի կարճաժամկետ ազդեցությունը կարող էր նաև զգալիորեն բարձրացնել աղքատության մակարդակը՝ աղքատության հասցնելով մոտավորապես 370. 000 հայաստանցու²⁰: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր չորրորդ հայաստանցին կարող էր հետընթաց ունենալ COVID-19-ի առաջացրած տնտեսական ցնցումների պատճառով²¹:

Հայաստանի տնտեսության հիմնական տարր հանդիսացող գյուղատնտեսության ոլորտը, նույնպես տուժել է COVID-19 համաճարակից: Օրինակ՝ Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերի գյուղատնտեսության վրա COVID-19-ի ազդեցության գնահատումը պարզել է, որ հիմնականում խաթարված են եղել սննդի և արժեքային շղթաները, ընդ

որում մանր սեփականատերերն ավելի շատ են ենթարկվել համաճարակի ազդեցությանը և ցնցումների, քան խոշոր սեփականատերերը²²:

Այնուամենայնիվ, կարևոր է, որ COVID-19-ը չստեղծեց նոր մարտահրավերների լայն շրջանակ, ավելի շուտ սահմանային սահմանափակումներ և մատակարարման շղթայի խափանումներ, ինչպես նաև առողջապահական համատարած խնդիրներ, ավելացրեցին առկա բացերն ու դժվարությունները արժեքային շղթաներում: Համաճարակի հետ կապված այս ցնցումները լայն համակարգերում, ինչպիսին է գյուղատնտեսությունը, ընդգծում են զարգացող հիվանդությունների բռնկման բարձր արժեքը՝ մարդկային առողջության վրա ուղղակի ազդեցություններից դուրս և ներդրումների ավելացման և Մեկ առողջություն» մոտեցման որդեգրման անհրաժեշտությունը:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բռնկումները ֆերմերային տնտեսություններում (օրինակ՝ խոզերի աֆրիկյան ժանտախտ, դաբաղ և այլն) կարող են նաև հանգեցնել զգալի ֆինանսական կորուստների գյուղատնտեսության ոլորտում: Դա ոչ միայն ժամանակատար և աշխատատար է՝ բռնկման աղբյուրը բացահայտելու, տուժած կենդանիներին ոչնչացնելու, մյուսներին պատվաստելու և տուժած համայնքներին կարանտինի

ենթարկելու առումով, այլև պետության վրա գյուղատնտեսական կենդանիների կորստի համար պետական ֆինանսական փոխհատուցում տրամադրելը կարող է թանկ նստել (օրինակ՝ 2008 թ. -ին 15.000 հայ ֆերմեր ստացել է ֆինանսական փոխհատուցում գյուղատնտեսական կենդանիների կորստի համար)²¹: Սա տնտեսության վրա ազդում է նաև ավելի լայն իմաստով, քանի որ այլ երկրները կարող են արգելել հայկական մսի ներմուծումը, իսկ սպառողական գները կարող են աճել

մատակարարման բացակայության պատճառով: Հայաստանն ինքը վերջերս՝ 2021 թվականի սեպտեմբերին, ժամանակավորապես արգելել էր խոզերի և խոզամթերքի ներմուծումը եվրոպական յոթ երկրներից՝ խոզերի աֆրիկյան ժանտախտի (ASF) ներմուծումն ու տարածումը կանխարգելելու նպատակով²²: Այն դեպքերում, երբ գյուղատնտեսական կենդանիների այդ հիվանդությունները կարող են փոխանցվել վայրի կենդանիներին կամ մարդկանց, կարող են առաջանալ լրացուցիչ լուրջ ազդեցություններ:



Աղյուսակ 4. Ուղղակի և անուղղակի ծախսերի օրինակներ, որոնք կարող են առաջանալ մարդկանց կամ կենդանիների հիվանդություններից:

Ծախսերի կատեգորիա	Ծախսերի օրինակներ	
	Մարդանց հիվանդություններ	Կենդանիների հիվանդություններ
Ուղղակի ծախսեր	Բուժման ծախսեր, շփված անձանց հայտնաբերում, պատվաստում, տեղաշարժի սահմանափակում, աշխատանքի կորուստ, երկարատև կողմնակի ազդեցություն առողջության վրա (օրինակ՝ երկար չբուժվող COVID)	գյուղատնտեսական կենդանիների բուժման ծախսեր, կենդանիների սպանդ և ոչնչացում, պատվաստում, ֆերմայի կորուստ, ներառյալ կենդանիների քանակի կրճատում, կենդանիներ գնելու/վաճառելու հնարավորության բացակայություն
Անուղղակի ծախսեր	Հարկային եկամուտների և զբոսաշրջության կրճատում, էկոհամակարգի ծառայությունների կորուստ, ընդհատումներ ուսումնական գործընթացում, մանկական պատվաստումների թվի նվազում և այլ հիվանդությունների բուժում, բուժաշխատողների շրջանում «մասնագիտական այրման» (burnout) դրսևորում և այլ առողջական խնդիրների վրա ուշադրության նվազում, ինչը հանգեցնում է մարդկանց հիվանդացության և մահացության աճին:	Կորուստներ ներքին շուկայում և արտահանման բնագավառում, հարկային եկամուտների, սննդի առկայությունից ստացված եկամուտներ կրճատում, վերին օղակների ազդեցությունը արդյունաբերության վրա (օրինակ՝ կերերի մատակարարում, վերամշակողներ, մանրածախ առևտուր):

Տվյալներ Համաշխարհային բանկի «Մեկ առողջության» գործառնական կառուցվածքից (Berthe et al. 2018)¹²

10 ԿԵՆՍԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ»

10.1 Ընդհանուր ակնարկ

Կենսապաշտպանությունը ենթադրում է պայքար ինչպես բնականորեն առաջացող կենսավտանգների դեմ (օրինակ՝ CCHFV, SARS-CoV-2, Էբոլա, թոչնագրիպ), այնպես էլ մարդու կողմից առաջացած (այսինքն՝ կանխամտածված կամ չարակամ հարձակումներ կենսաբանական նյութերով, ինչպիսիք են սիբիրախտը, բոտուլիզմը և այլն): Կենսաբանական զենքերը կարող են լուրջ վտանգ ներկայացնել տնտեսությունների, ռազմական ոլորտի, հանրային առողջության և գյուղատնտեսության համար: Գնալով ավելի մտահոգիչ է դառնում այն փաստը, որ ավելի մատչելի և բարդ բիոտեխնոլոգիական գործիքները հեշտացնում են կենսաբանական զենքերի մշակումն ու օգտագործումը²³: Այնուամենայնիվ, SARS-CoV2-ի վիրուսի ազդեցությունը և նոր ի հայտ եկած վարակիչ հիվանդությունների դեպքերի աճող հաճախականությունը մեզ հիշեցնում են, որ բնական հիվանդությունների առաջացման դեպքերը, հատկապես հեշտ փոխանցվող վիրուսների միջոցով, կարող են շատ ավելի մեծ վտանգ ներկայացնել առողջությանն և ազգային անվտանգությանը, քան կանխամտածված հարձակումները կենսաբանական զենքով²³: Հետևաբար, կենսապաշտպանության ուժեղացումը «Մեկ առողջություն»

մոտեցման ներգրավմամբ ուղղակիորեն կնպաստի ազգային անվտանգությանը: «Մեկ առողջության» և կենսապաշտպանության ինտեգրումը կարող է սկսվել կենսապաշտպանության ռազմավարական փաստաթղթերի, օրինակ՝ կենսապաշտպանության ազգային ռազմավարության վերանայմամբ՝ համոզվելու, որ կենդանիների, շրջակա միջավայրի և հանրային առողջապահության գործակալությունների գործունեությունը և կենսապաշտպանության ու ազգային անվտանգության գործունեությունը համահունչ են և համակարգված:

Ինչպես հանրային առողջապահության ոլորտը, այնպես էլ պաշտպանության, ռազմական և անվտանգության (DMS) ոլորտները գլոբալ մասշտաբով զբաղվում են առողջության համար ծանր հետևանքներ ունեցող հիվանդությունների ռիսկերի կանխարգելմամբ և մեղմացմամբ: Պաշտպանության նախարարություններին հանձնարարվել է մշակել կանխարգելիչ բժշկական միջոցառումներ, օրինակ՝ ախտորոշում, պատվաստանյութեր և կենսաբանական ռիսկերի բուժում:

Ռազմական սեկտորն օգնում է տուժած բնակչությանը՝ կառուցելով բուժկենտրոններ, ապահովելով անցակետեր և տրամադրելով խաղաղապահ ուժեր, որոնք թույլ կտան օգնության խմբի աշխատողներին կատարել իրենց աշխատանքը: Իրավապահ մարմինները մասնակցում են հանրային առողջապահության բնագավառում իրականացվող միջոցառումներին, ինչպես, օրինակ, կարանտինը և այլ սահմանափակող միջոցառումներ: Սահմանային հսկողության գործակալություններն աշխատում են ազգային սահմանները հատող ապրանքների շրջանում վարակների հարցուցիչներ հայտնաբերելու ուղղությամբ, իսկ հետախուզական գործակալությունները փորձում են կանխատեսել, թե որտեղ կհայտնվի հաջորդ վարակիչ հիվանդությունը, միաժամանակ հետևելով անհատներին/խմբերին՝ «տեխնաձին» կենսաբանական վտանգները հայտնաբերելու համար:

Ընդհանուր առմամբ, առողջապահական սեկտորները

10.2 Կենսապաշտպանությունը և «Մեկ առողջությունը» Հայաստանում

Հայաստանում և՛ անվտանգության, և՛ առողջապահության ոլորտները նպաստում են վարակիչ հիվանդությունների հայտնաբերմանը, քանի որ հիվանդությունների հայտնաբերման համար պատասխանատու են

գլոբալ մասշտաբով մասնագիտանում են այնպիսի գործառույթներում, ինչպիսիք են կենսահսկողությունը, առողջապահությունը և դեպքերի կառավարումը, սակայն այս սեկտորներն այնքան էլ հարմար չեն լոգիստիկայի և տրանսպորտի կամ կենսաբանական զենքի ոչնչացման գործառույթների համար, որոնք կարող են իրականացվել պաշտպանության, ռազմական և անվտանգության (DMS) սեկտորների կողմից²⁴: Օրինակ՝ պաշտպանության, ռազմական և անվտանգության (DMS) սեկտորների հիմնական հնարավորությունները հաճախ համահունչ են զոոնոզ հիվանդությունների բռնկումների դեմ պայքարի սկզբունքներին (կանխարգելում, հայտնաբերում, արձագանքում և վերականգնում) և կարող են օգնել հետախուզության, վաղ փուլերում նախազգուշացման, կանխարգելիչ բժշկական միջոցառումների, զեկուցման, մնացորդների ոչնչացման, օրենքի կիրարկման և վերականգնմանը նպաստող հնարավորությունների զարգացման հարցերում²⁴:

Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC), Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոնի (RVSPCLS), Մոլեկուլային

կենսաբանության ինստիտուտի, Կենդանաբանության ինստիտուտի և Երևանի պետական համալսարանի լաբորատորիաները: պաշտպանության նախարարությունը իր կազմում ունի ռազմաբժշկական վարչություն և սանիտարա-համաճարակային ծառայություն, որոնք ՊՆ համակարգում ապահովում են համապատասխան գործառնությունների իրականացումը: Անհրաժեշտության դեպքում նրանք դիմում են Առողջապահության նախարարությանը՝ ավելի մասնագիտացված հետազոտությունների, պայքարի և կանխարգելման միջոցառումների համար: Հայաստանը նաև միջազգային համագործակցություններ ունի առողջապահության և կենսապաշտպանության ոլորտում, այդ թվում՝ ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի հետ՝ կանխարգելելու տեխնոլոգիայի, ախտաճինների և փորձաքննության տարածումը, որոնք կարող են ծառայել կենսաբանական զենքի ստեղծմանը, ինչպես նաև ընդլայնելու Հայաստանի կարողությունները՝ հայտնաբերելու, ախտորոշելու և հաղորդելու կենսահաբեկչական հարձակումների և պոտենցիալ համաճարակների մասին²⁵:

Բացի այդ, Հայաստանի Հանրապետության՝ վերջերս մշակված ազգային անվտանգության ռազմավարությունում (2020թ.)

հատուկ նշվում է հանրային առողջության և կենսաանվտանգության խթանման, ինչպես նաև շրջակա միջավայրի վերականգնման, պաշտպանության և բարելավման կարևորության մասին²⁶: Թեև ռազմավարության մեջ կոնկրետ առաջարկություններ չեն ներկայացվում, սակայն ազգային անվտանգության ռազմավարության մեջ հանրային առողջության և շրջակա միջավայրի պահպանության ընդգրկումը ենթադրում է գիտակցում այն բանի, որ անվտանգությունն ու առողջությունը փոխկապակցված են: Ներկայումս Անվտանգության խորհրդի գրասենյակի համակարգմամբ ՀՀ վարչապետի 2018թ. հոկտեմբերի 8-ի N 1320-Ա որոշմամբ ստեղծված «Կենսաանվտանգության և կենսապահովման հարցերով» աշխատանքային խումբն աշխատում է Նախագծի մշակման ուղղությամբ: Մշակման գործընթացն, ըստ էության, ավարտվել է, աշխատանքներ են տարվում օրենսդրությամբ սահմանված կարգով Նախագծի ընդունման ուղղված հետագա գործընթացներն ապահովելու ուղղությամբ: 7 տարբեր նախարարություններից և 10 կազմակերպություններից ներկայացուցիչներ ներառող այս միջկառավարական խմբի ստեղծումն ու համագործակցության ապահովումը բազմաճյուղ համագործակցության առավելությունների կարևոր օրինակ է: Թեև կենսաանվտանգության և կենսապաշտպանության համար, վերջին հաշվով, պատասխանատվություն է կրում

Առողջապահության
նախարարությունը,
առողջապահության,
անվտանգության և պաշտպանության
ոլորտների այս
համագործակցությունը
կենսապաշտպանության
միասնական մեկ առողջ մոդելի
օրինակ է: Ավելին, կոալիցիոն նման

մոտեցումը կարող է
համախմբվածություն ստեղծել
գերատեսչությունների և տեղական
մարմինների միջև, ինչը կարող է
նպաստել առաջնահերթությունների և
պահանջների մեղմմանը, ինչով
ոլորտներն ավանդաբար զբաղվում են
առանձին-առանձին²³:

Ներդիր 1.

Կենսապաշտպանությունը և գիտական հետազոտությունները ընթանում են ձեռք ձեռքի տված:

Պատշաճ կենսաանվտանգությունը կարևոր է ինչպես հետազոտողների, այնպես էլ կենդանիների առողջության և անվտանգության պաշտպանության համար: 2018-2023 թվականներին Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հետազոտողները ղեկավարել են Հայաստանում իրականացվող կենսատեսահսկման նախագիծը՝ բնութագրելու չղջիկների կորոնավիրուսների բազմազանությունը Արևմտյան Ասիայում, հասկանալու մարդկանց վիրուսի տարածման հետ կապված ռիսկի գործոնները և ամրապնդելու կենսաանվտանգության ու չղջիկների պահպանության հետազոտական կարողությունները¹: ԵՊՀ գիտաշխատողները ստացել են թույլտվություն, շրջակա միջավայրի նախարարությունից վայրի կենդանիներից նմուշառում իրականացանելու համար, իսկ Անվտանգության խորհուրդն ապահովել է համապատասխան կենսաանվտանգության արձանագրությունները՝ տարածաշրջանային տեղեկատու լաբորատորիաներում նմուշների վերլուծության համար: Բազմաոլորտհամագործակցությունը, ինչպիսին հանդսանում է տվյալ հետազոտությունը, թե ինչպես կարող են հետազոտողները, բնապահպանները և անվտանգության փորձագետները համագործակցել՝ ապահովելով խիստ ակադեմիական հետազոտություններ և կենսաանվտանգությունը, ինչպես նաև կարող են փոխկապակցվել՝ կատարելագործելու մեր հավաքական ըմբռնումն ու պատրաստվածությունը զոռնոգ հիվանդությունների սպառնալիքները կանխելու ընդհանուր նպատակում:

Հայաստանը, ինչպես բոլոր երկրները, ներկայումս գտնվում է շրջադարձային փուլում և կարող է դասեր քաղել COVID-19 համավարակից և լուծել տեղական, ազգային և տարածաշրջանային կենսապաշտպանության կարևոր բացերը՝ մինչև վարակիչ հիվանդության հաջորդ համաճարակը կամ կենսաբանական զենքով հարձակումը: Առողջապահության և պաշտպանության, ռազմական և անվտանգության (DMS) ոլորտների միջև համագործակցության մի քանի օրինակներ արդեն գրանցվել են Հայաստանում: Առաջարկվում է ամրապնդել այս համագործակցությունը նաև հետագայում: Ավելի կոնկրետ՝ Անվտանգության խորհրդի գրասենյակը կարող է հիմնվել իր կենտրոնական դերի վրա կենսաապահովության և կենսաանվտանգության հարցերով միջկառավարական աշխատանքային խմբի կազմակերպման և վայրի բնության նմուշների առանձնացման գործի համակարգման հարցում՝

դեկավարելով բազմոլորտ խումբ՝ Ազգային Առողջապահության կոմիտեի ստեղծման հարցը գնահատելու և քննարկելու: Հաշվի առնելով COVID-19 համավարակը, խորհուրդ ենք տալիս նաև, որ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ նշված հանրային և բնապահպանական առողջության նպատակների իրականացմանը, ինչպես նաև կենսաբանական ռիսկերի կառավարման համակարգերի ամրապնդմանը հրատապ ուշադրություն հատկացվի: Վերջապես, «Մեկ առողջության» մեջ ներգրավված բոլոր ոլորտների դերերի, ներառյալ պաշտպանության, ռազմական և անվտանգության (DMS) ոլորտների օպտիմալացումը կօգնի նվազեցնելու հիվանդությունների բեռը, բացասական ֆինանսական ազդեցությունները, անվտանգությանը սպառնացող ռիսկերը և հանրության կյանքի լայնամասշտաբ խաթարումը, որն առաջանում է վարակիչ հիվանդությունների բռնկումներից²⁴:



11 ՌԻՍԿԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՑԻԼԱՎՈՐՈՒՄ

Ռիսկերի կրճատումը ներառում է միջոցառումներ՝ նվազեցնելու մարդկանց, կենդանիների կամ շրջակա միջավայրի վրա ազդող վնասների հավանականությունը կամ մեղմելու նմանատիպ վնասների ինտենսիվությունը կամ սրությունը (ռիսկերի ազդեցության կրճատում)²⁷: Չոռնոզ հիվանդությունների ռիսկերի նվազեցումը ներառում է այն գործոնների բացահայտման գործընթաց, որոնք նվազեցնում են հիվանդությունների հիմքում ընկած դրդապատճառները կամ գործոնները, որոնք հանգեցնում են վարակի և/կամ դրա տարածմանը (օրինակ՝ ռիսկերի համատեղ գնահատումը և ռազմավարական պլանավորումը), ինչպես նաև միջամտությունների և հաղորդակցման միջոցների կիրառում՝ կանխելու հիվանդության հարուցիչների կողմից մարդ-կենդանի-միջավայր շփման տարածքներում առողջությանը սպառնացող ռիսկերը²⁷:

Չոռնոզ հիվանդությունների ռիսկային գործոնների օրինակներ են.²⁷

- Հողօգտագործման փոփոխություններ, անտառահատումներ, բնական միջավայրի խաթարում և կործանարար գործողություններ, օրինակ՝ հանքարդյունաբերություն

- Մարդկանց և կենդանիների իմունական խարգելման բացակայություն
- Սննդամթերքի ոչ պատշաճ պատրաստում
- Սոցիալական փոփոխություններ, օրինակ՝ բնակչության աճի, խտության և միգրացիոն փոփոխություններ
- Գյուղատնտեսական պրակտիկաներ, ներառյալ կենսաանվտանգություն և կենդանիների որս/սպանդ
- Օդի աղտոտվածություն և կլիմայի փոփոխություն
- Փոփոխություններ մարդ-վայրի բնություն շփման տարածքներում
- Քիմիական նյութեր հողի և ջրի մեջ

«Մեկ առողջություն» բազմոլորտ մոտեցման ժամանակ կառուցվածքային և թափանցիկ կերպով այս գործոնները հաշվի առնելը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ փոխանցման ուղիները և օրինաչափությունները, որոնք կարող են հանգեցնել զոռնոզ ախտածինների փոխանցմանը և զոռնոզ հիվանդությունների տարածմանը²⁷: Հատկապես կարևոր է անուշադրության չմատնել շրջակա միջավայրի գործոնները, քանի որ ախտածինները կարող են տարածվել մարդկանց շրջանում աղտոտված հողի և ջրի միջոցով, և քանի որ

կլիմայի փոփոխությունները վատթարացնում են եղանակային ծայրահեղ դրսևորումները, ինչպիսիք են, օրինակ, ջրհեղեղները, դրանք

կարող են հանգեցնել զոռնոզ և փոխանցողների միջոցով տարածվող հիվանդությունների բռնկումների²⁷:

11.1 ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (EID) ՌԻՍԿԵՐԻ ՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ

Պոտենցիալ ռիսկերի գործոնների և ռիսկերի նվազեցման պրակտիկաների բացահայտման գործընթացը պետք է իրականացվի բոլոր համապատասխան ոլորտների փորձագետների կողմից՝ առավելագույնի հասցնելու արդյունավետությունը, ներկայացնելու տարբեր հեռանկարներ և խուսափելու սխալ հաղորդակցության պատճառով առաջացած անցանկալի հետևանքներից, որոնք կարող են մեծացնել զոռնոզ հիվանդությունների ազդեցությունը ոլորտների ոչ բավարար տեղեկացվածության և ներգրավվածության պատճառով²⁷:

Ե՛վ վիրտուալ աշխատաժողովի, և՛ տարածաշրջանային հանդիպման մասնակիցները ներգրավվել են Հայաստանին հատուկ նոր առաջացող հիվանդությունների (EID) ռիսկերի գործոնների բացահայտման գործընթացում (Աղյուսակ 5): Մասնակիցներին տրվել է ռիսկի պրոֆիլավորման օրինակ՝ ստանդարտ ձևանմուշի տեսքով: Օրինակում բացահայտվում են այն գործոնները, ներառյալ տվյալ երկրին հատուկ, որոնք կարող են ազդել

(նվազեցնել կամ մեծացնել) առաջացող վարակիչ հիվանդությունների ռիսկերն ու ազդեցությունը: Ձևանմուշն օգտագործվել է քննարկումը սկսելու համար, այդ թվում՝ հաշվի առնելու գործոնների արդիականությունը, գիտելիքների թիրախային բացերը, որտեղ հնարավոր է հետագա գնահատման անհրաժեշտություն լինի, ինչպես նաև բացահայտելու առաջնահերթությունները նոր առաջացող զոռնոզ հիվանդությունների ռիսկերի նվազեցման համար: Մասնակիցների փորձագիտական գիտելիքների և առաջարկված ձևանմուշի կիրառմամբ այս գործողությունը նպատակ ուներ խթանելու ռիսկերի հնարավոր աղբյուրների, ինչպես նաև ռիսկերի նվազեցման հնարավոր հնարավորությունների մասին տարբեր ոլորտների և հաստատությունների միջև ընդհանուր փոխըմբռնումը: Աշխատաժողովից հետո աղյուսակին ավելացվել են լրացուցիչ գործոններ, և վերջնական արդյունքները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 5-ում:

Նոր առաջացող վարակիչ հիվանդությունների (EID)՝ այս աշխատանքում օգտագործված չորս կատեգորիաներն են.

Առաջացման գործոններ՝
Էկոլոգիական,
համաճարակաբանական կամ սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք կարող են նպաստել հիվանդության առաջացմանը կամ ընդգրկման աճին կամ տարածվածության աշխարհագրական տիրույթին:

Տարածման գործոններ՝ մարդկանց և կենդանիների տեղաշարժը և տեղաշարժի ձևերը, ենթակառուցվածքները, մարդկանց խտության դինամիկան կամ հիվանդության հայտնաբերման և դրա դեմ պայքարի հիմնական միջոցների հասանելիությունը, որոնք կարող են

ազդել հիվանդության տարածման վրա:

Խոցելիության գործոններ՝
հիվանդությունների հայտնաբերման և արձագանքման հնարավորությունների, ենթակառուցվածքների, աշխատուժի պատրաստվածության, անվտանգության և «Մեկ առողջության» համակարգերի բացերը, որոնք մեծացնում են խոցելիությունը հիվանդությունների բռնկման և զսպման մեխանիզմների նկատմամբ

Պաշտպանիչ գործոններ՝
գործելակարգ, քաղաքականություն կամ այլ պայմաններ, որոնք կարող են նվազեցնել տարածման ռիսկը կամ նվազեցնել հիվանդության հետևանքները առաջանալուց հետո:



Աղյուսակ 5. Հայաստանում նոր առաջացող վարակիչ հիվանդությունների (ներառյալ գոնոգ հիվանդություններ, փոխանցողների կողմից և սննդային ախտածինների միջոցով տարածվող) ներուժը և ռիսկի գործոնները

Առաջացման գործոններ	Տարածման գործոններ
<ul style="list-style-type: none"> • Էկոտուրիզմ (այցելություն մի շարք քարանձավներ, արշավներ, ճամբարներ)։ Միայն 1-2 քարանձավներում են իրականացվում պաշտպանական կամ իրազեկման որոշ միջոցառումներ՝ սահմանափակելու մարդկանց մուտքը/վայրի բնության հետ շփումը։ Զգալի դեր է խաղում նաև պատահական վարերից ջրօգտագործումը խմելու նպատակով։ Այսպես կարող է փոխանցվել լեպտոսպիրոզը, տուլարեմիան և մի շարք այլ գոնոզները։ • Վարակիչ հիվանդությունների փոխանցողները (հողվածոտանիները) կարող են ավելի մեծ վտանգ ներկայացնել, քան կաթնասունների հետ անմիջական շփումը։ Փոխանցողների կյանքի տևողությունը, կենսաբանությունը և բաշխումը փոխվում է կլիմայի փոփոխության պատճառով։ • Հիվանդությունների ուղղակի փոխանցման դեպքեր կաթնասուններից, օրինակ՝ կապված կրծողների խտության և մարդկանց փոխազդեցության հետ լեպտոսպիրոզ (բնական օջախներ Հայաստանի գրեթե ողջ տարածքում), հանթավիրուսային վարակներ (Հայաստանում տվյալներ չկան), տուլարեմիա (բնական օջախներ Հայաստանում)։ • Գյուղատնտեսական կենդանիները երբեմն զգալի ծամանակ են անցկացնում լեռներում (արոտավայրերում) և շփվում են վայրի բնության հետ։ Հնարավոր է գայլերիցի/շնագայլերից հիվանդությունների փոխանցում գյուղատնտեսական կենդանիներին կծելու միջոցով։ • Կաթնասունների և փոխանցողների (անողնաշարավորների) հարուստ բազմազանություն՝ հատկապես տեղական միգրացվող տեսակները, քանի որ Հայաստանում կարող է լինել «իրանական և եվրոպական» կլիմա՝ չոր տարածքներ և խոնավ ցուրտ տարածքներ։ • Հակամանրէային կայունություն (AMR)։ Անասնաբույժները լայնորեն կիրառում են հակաբիոտիկներ, որոնք հետագայում հայտնվում են կենդանական ծագման սննդամթերքում և կարող են ընկնել մարդու օրգանիզմ։ • Վայրի բնության տարածքների ոչնչացում/փոփոխում՝ նոր ճանապարհների կառուցման և հանքարդյունաբերության ընդլայնման պատճառով։ • Գյուղացիների կողմից գյուղատնտեսական հողերի օգտագործումը (թունաքիմիկատների և կրծողասպան նյութերի անվերահսկելի օգտագործումը) կարող է առաջացնել միջատասպան նյութերի դեմ կայունության ձևավորման։ • Զրի ընդհանուր աղբյուրներ՝ վայրի և գյուղատնտեսական կենդանիների համար։ 	<ul style="list-style-type: none"> • Գյուղատնտեսական կենդանիների սեզոնային տեղաշարժեր (օրինակ՝ Արարատյան դաշտավայրից լեռնային շրջաններ և հակառակ ուղղությամբ)։ • Բնության էկոհամակարգերում տարածված աղբ (թափոնների ոչ բավարար կառավարում/կենսաանվտանգությունը, որը գրավում է այլ վայրի կենդանիներին)։ • Զվոդ տեսակների էկոլոգիական խաչմերուկ (Հայաստանը գտնվում է Կասպից և Սև ծովերի միջև)։ • Կենսաանվտանգության պատշաճ միջոցառումների մասին ֆերմերների և գյուղատնտեսների շրջանում վատ տեղեկացվածություն կամ գիտակցում։ • Աշխարհագրական/կլիմայական պայմանները բարենպաստ են վարակիչ հիվանդությունների հողվածոտանի փոխանցողների համար։ • Կենդանիների տեղափոխում առանց կարանտինային կանոնների պահպանման։

Խոցելիության գործոններ	Պաշտպանիչ գործոններ
<ul style="list-style-type: none"> • Հակամանրէային կայունության (AMR) վերաբերյալ գործող կանոնակարգեր չկան: • Հիմնականում հատկապես քարանձավներում աշխատող զբոսավարների համար ուսուցում/հանրային իրազեկվածություն չկա (որոշ սահմանափակ ոչ պաշտոնական հանդիպումներ զբոսավարների և վայրի բնության ակադեմիական/ հետազոտական փորձագետների հետ: Այս դեպքում էլ իրազեկումն ավելի շատ կենդանիների պաշտպանության մասին է, ոչ թե առողջության): «Մեկ առողջության» համակարգման առաջնահերթությունները և պահանջները տարբեր են տարբեր ոլորտների համար: • Փոխանցողների դիտարկման համար նմուշառման ոչ բավարար ջանքեր: • «Մեկ առողջության» շրջանակում սահմանափակ թվով մասնագետներ/փորձագետներ՝ ղեկավարելու/վարելու հետազոտություններ: • Հիվանդանոցների և հանրային առողջապահական կլինիկաների միջև ախտորոշման վերաբերյալ տվյալների և տեղեկատվության փոխանակման բարելավման անհրաժեշտություն: • Ավելի լավ ախտորոշիչ գործիքների և բժիշկների վերապատրաստման անհրաժեշտություն հազվագյուտ հիվանդությունները բացահայտելու համար: Օրինակ՝ այնպիսի հազվագյուտ հիվանդությունները, ինչպիսիք են տուլարեմիան և լեպտոսպիրոզը, ախտորոշվում են չափազանց ուշ կամ այդպես էլ չեն ախտորոշվում (սա հատկապես կարևոր է, երբ հիվանդները տեղաշարժվում են Հայաստանի տարբեր մարզերով): • Հիվանդությունների միջտեսակային փոխանցում: Սահմանափակ հետազոտություններ են արվում՝ բացահայտելու հիվանդությունների համաճարակաբանությունը (օրինակ՝ հիվանդ կենդանիների գիշատիչների կողմից հարձակումը) և բաշխումը՝ ռիսկերի քարտեզագրման համար: • Հողօգտագործման փոփոխությունը (օրինակ՝ հանքարդյունաբերություն) չի չափվում: • Կենտրոնացված և տարածում ունեցող տեղեկատվական հոսքի բացակայություն: 	<ul style="list-style-type: none"> • Զբոսաշրջության գործակալությունների հետ աշխատելու հնարավորություն (իրազեկվածության բարձրացում, օրինակ՝ տեղի է ունեցել Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) հետ զիկա վիրուսի տարածման ժամանակ: One Way զբոսաշրջական ընկերությունը արդեն ներառել է զբոսավարների պատրաստման ծրագրում “Բացօթյա հանգստի կենսաբանական վտանգները” դասընթացը և հաջողությամբ իրականացնում է, Արենի 1 քարանձավի դիմաց պաստառում ներկայացված է քարանձավում զբոսաշրջիկների վարքի կանոնները • վերբերյալ տեղեկատվություն): • Վայրի բնությունը որպես սնունդ օգտագործելու սովորության բացակայություն: Հայաստանում նույնիսկ որսը սահմանափակված է (թույլատվում է միայն որոշ փոքր թռչունների որսը), խիստ հսկողություն: • Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն (NCDC) ունի որոշակի հնարավորություն գոտնոգ հիվանդությունների տվյալների քարտեզագրման միջոցով ռիսկերի գնահատման համար՝ ուղղորդելու հիվանդությունների կառավարման և վաղ հայտնաբերման գործընթացները: • Զոտնոգ հիվանդությունների վերաբերյալ դասընթացներ բուժաշխատողների համար՝ ուղղված վարակիչ հիվանդությունների ախտորոշման գործընթացի բարելավմանը, որպեսզի բացառվեն «անհայտ ծագման տենդ» և նմանատիպ վերջնական ախտորոշումները: • Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) կողմից ընթացիկ տվյալների և արխիվացված տվյալների քարտեզագրման վերլուծություն: • Մեծ թվով հետազոտական ծրագրեր, հատկապես մարդկանց և կենդանիների առողջության ոլորտներում: • Զղջիկների վարակիչ հիվանդությունների ռիսկերի քարտեզագրում:

11.2 ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԹԵԺ ԿԵՏԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Նոր վարակիչ հիվանդությունների մեծ մասը ծագում է վայրի բնության մեջ, այնուհետև փոխանցվում է մարդկանց: Հիվանդությունների փոխանցմանը նախորդում են օրինաչափություններ, որոնք դրանց տարածումը որոշ տարածքներում ավելի հավանական են դարձնում, քան այլ տարածքներում՝ ստեղծելով հիվանդության առաջացման թեժ կետեր: Թեժ կետերի քարտեզագրումը կարող է օգնել որոշում կայացնողներին օպտիմալացնելու հիվանդությունների կառավարման գործընթացը և խթանելու հանրային առողջության ոլորտում այնպիսի միջամտությունները, որոնք նվազեցնում են հիվանդությունների՝ վայրի բնությունից մարդկանց փոխանցման վտանգը:

Միջոլորտային համագործակցությունը կարևոր է նաև նոր առաջացող վարակիչ հիվանդությունների ռիսկերի գործոնների և թեժ կետերի բացահայտման գործում: Քանի որ նոր առաջացող գոռնոց հիվանդությունների ռիսկերի քարտեզագրումը պահանջում է ոչ միայն առողջապահության բնագավառի տվյալներ, այլև ժողովրդագրական, բնապահպանական, կենսաբանական և վայրի բնությանը վերաբերող

տվյալներ⁹, կարևոր է ռիսկերի քարտեզագրման գործընթացում ներգրավել տարբեր ոլորտներ: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը (NCDC) պատասխանատու է Հայաստանում գոռնոց հիվանդությունների ռիսկերի քարտեզագրման համար, իսկ այլ կազմակերպություններ, այդ թվում՝ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ԳԱԱ-ն, Հայաստանի Ազգային ագրարային համալսարանը և ԵՊՀ երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետը, իրականացնում են քարտեզագրման աշխատանքներ և հետազոտություններ: Ներկայումս հիվանդությունների քարտեզագրման մեծ մասը, որ իրականացվում է Հայաստանում, նկարագրական է և ուղղված է տարբեր մարզերում գոռնոց հիվանդությունների դեպքերի և տարածվածության/հիվանդացության մասին պատկերացում կազմելուն: Մա շատ կարևոր աշխատանք է, սակայն կարելի է զարգացնել քարտեզագրման հնարավորությունները և ներառել նաև տարածական վերլուծություններ, որոնցում հավաքագրվում են տարբեր հիվանդությունների ռիսկերի քարտեզները, ինչպես նաև


տեղեկատվություն այլ ոլորտներից, ներառյալ կենդանիների տեսակների բաշխման, հողածածկույթի, գյուղատնտեսական կենդանիկենդանիների խտության, կլիմայի մասին և այլ տվյալներ:

Ընդհանուր առմամբ, Կովկասյան տարածաշրջանը ներուժային «թեժ կետ» է նոր առաջացող վարակիչ հիվանդությունների (EID) համար, ինչը մեծապես պայմանավորված է մի քանի էկոլոգիական և ժողովրդագրական ռիսկի գործոնների միախառնմամբ, ներառյալ վայրի կենդանիների բազմազանությունը, բնակչության աճող թիվը, հողօգտագործման փոփոխությունները, ինչպես նաև գյուղատնտեսության տարածումը և քաղաքների ընդլայնումը^{5, 9}: Սովորաբար այն չի համարվում բարձր ռիսկայնության տարածաշրջան (ինչպես, օրինակ, հասարակածի երկայնքով արևադարձային շրջանները՝ Բրազիլական Ամազոն, Կենտրոնական Աֆրիկա, Հարավարևելյան Ասիա), սակայն գոռնոգ հիվանդությունների ընդհանուր շատ մոդելներ չեն ներառում Կովկասյան տարածաշրջանում

հիվանդությունների առաջացման բոլոր կետերը⁹: Օրինակ՝ թռչնագրիպով վայրի թռչունների վարակվելու և վիրուսի տարածման ռիսկը Հայաստանում և Կովկասյան տարածաշրջանում համեմատաբար ցածր է, սակայն Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը գտնվում են վայրի թռչունների միգրացիոն ուղիների երկայնքում, և հիվանդությունների տարածման «ռիսկերի լանդշաֆտը» ստատիկ չէ: Հողօգտագործման, բնակչության աճի և տեղաշարժի, անասնաբուժական պրակտիկայի, հակամարտությունների, կլիմայի փոփոխությունների, շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության, ինչպես նաև այլ գործոնների շարունակական փոփոխությունները դինամիկ են և տարեցտարի փոխում են ռիսկերի լանդշաֆտը:

Նոր առաջացող վարակիչ գոռնոգ հիվանդության ռիսկերի քարտեզագրման օրինակ ցուցադրելու համար նախկինում հրապարակված վերլուծությունն⁹ օգտագործվել է Կովկասյան տարածաշրջանի համար գոռնոգ հիվանդությունների ռիսկերի մոդել ստեղծելու համար (Նկար 4):

Նկար 4. Նոր առաջացող վարակիչ հիվանդությունների թեժ կետերի նախնական քարտեզ Կովկասյան տարածաշրջանի համար



Այս նախնական վերլուծությունը ընդգծում է մի քանի կարևոր բացահայտումներ.

- 1) Նոր հիվանդությունների առաջացման ռիսկը տարածաշրջանում միատեսակ չէ:
- 2) Բնական կենսաբանական վտանգների համար առավել խոցելի շրջանները գտնվում են Հայաստանի և Ադրբեջանի վիճելի տարածքներում և սահմանամերձ շրջաններում, որտեղ շրջակա միջավայրի կողմից ռազմական անձնակազմերի վրա կարող է լինել ամենամեծ ազդեցությունը:

Թեև այս նախնական վերլուծությունը գնահատելի է, սակայն այն չի պատասխանում նոր առաջացող վարակիչ հիվանդությունների ռիսկերի քարտեզագրման ամենատարածված մարտահրավերներից մեկին, այսինքն՝ վերլուծության մեջ բացակայում են ազգային մակարդակով համապարփակ տվյալները: Այս մոդելը բարելավելու համար անհրաժեշտ է ներառել ավելի մանրամասն տվյալներ երկրի մակարդակով: Սա առաջնահերթ ոլորտ է ապագա հետազոտությունների համար:

11.2.1 Հողօգտագործման փոփոխություն

Գյուղատնտեսական գործունեության հետ կապված հողօգտագործման մարդածին փոփոխությունները նոր վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման հիմնական պատճառն են⁹: Սա կարող է մեծացնել մարդկանց շփումը վայրի բնության ներկայացուցիչների և նրանց ախտածինների հետ: 1960 թվականից ի վեր գրանցված նոր հիվանդությունների ավելի քան 30%-ը պայմանավորված է հենց այս շփումով:²⁸ Քանի որ մարդիկ շարունակում են գլոբալիզացման գործընթացը հողօգտագործման փոփոխության, հակամարտությունների և միգրացիայի միջոցով, մենք պետք է շարունակաբար մշտադիտարկենք՝ զոոնոզ հիվանդությունների ռիսկերը բացահայտելու համար: Օրինակ՝ հետկոնֆլիկտային գոտիներում սոցիալ-տնտեսական փոփոխությունները շարունակել են փոխել գյուղատնտեսական արտադրության համար

նախատեսված լանդշաֆտը և լքված հողերը Հայաստան-Ադրբեջան սահմանին²⁹: Հողօգտագործման այսպիսի փոփոխությունները կարող են հանգեցնել զոոնոզ հիվանդությունների ռիսկերի լանդշաֆտի փոփոխությունների:


Կովկասյան տարածաշրջանը հիմնականում բաղկացած է խոտածածկ տարածքներից, մշակահողերից և ծառածածկ տարածքներից (Նկար 5): Համեմատած իր հարևան երկրների հետ՝ Հայաստանում խոտհարքներն ավելի շատ են, իսկ ծառածածկ տարածքներն ու մշակահողերը՝ ավելի քիչ՝ համեմատած համապատասխանաբար Վրաստանի և Ադրբեջանի հետ: Տնտեսական զարգացում ապահովելու ընթացքում Հայաստանի համար կարևոր է կայուն կերպով զարգացնել հողերը, պահպանել անտառները, հատկապես հյուսիս-արևելքում, և հետևել շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցություններին:

Նկար 5. Հողածածկույթի դասակարգումներ: Կովկասյան տարածաշրջան: Եվրոպական տիեզերական գործակալության (ESA) WorldCover նախագիծ, 2021 թ.

Ա. Կովկասյան տարածաշրջանի հողածածկը: Տարածաշրջանը հիմնականում խոտածածկ է (դեղին), մշակահողեր (մանուշակագույն) և ծառածածկ տարածքներ(կանաչ): Բ. Հայաստանը մեծ մասամբ ծածկված է խոտածածկ տարածքով՝ ծառածածկ այլ տարածքներ, մշակահողեր և ավելի փոքր կառուցապատված տարածքներով (կարմիր): Հարևան երկրների համեմատ՝ Հայաստանում խոտածածկ տարածքներն ավելի շատ են, իսկ մշակահողերը և ծառածածկ տարածքները՝ ավելի քիչ: Մշակահողերի և գյուղատնտեսական հողերի փոխակերպումը (անտառապատ տարածքներից) նախկինում կապված է եղել

զոռնոգ վարակների տարածման ավելի մեծ հավանականության հետ, ուստի կարևոր է, որ Հայաստանը կայուն կերպով պահպանի մշակահողերը և մշտադիտարկման ենթարկի հողերի փոխակերպման տեմպերը և վայրերը:

Ա. Կովկասյան տարածաշրջանի հողատարածքները Բ. Հայաստանի հողատարածքները



11.2.2 Մարդու ներգործության ինդեքս

Բնական միջավայրի վրա մարդու ազդեցության մեկ այլ չափանիշ է մարդու ներգործության ինդեքսը (HFI): Սա բարդ չափիչ է, որն արտացոլում է շրջակա միջավայրի մարդու ունեցած ընդհանուր ներծորգության չափը: Ինդեքսը կազմված է 8 փոփոխականներից (կառուցապատված միջավայր, բնակչության խտություն, գիշերային լույսեր, մշակահողեր, արոտավայրեր, ճանապարհներ, երկաթուղիներ և նավարկելի ջրային ուղիներ): Այն արտացոլում է, թե ինչպես են մարդիկ ժամանակի ընթացքում փոխում շրջակա միջավայրը: Ինչպես շատ երկրներ, այնպես էլ Հայաստանը զգալիորեն ընդլայնել է մարդկային ներգործությունը 21-րդ դարի ընթացքում (Նկար 6)³⁰: Սա

նշանակում է, որ մարդկային պոպուլյացիաները ավելի լավ են կապակցված, քան նախկինում, ինչը կարող է հանգեցնել տնտեսական աճի և առողջության բարելավման, սակայն միաժամանակ դա կարող է հանգեցնել նաև հիվանդությունների ավելի արագ տարածման:

Մարդու ղեկավարությամբ սպահովվող զարգացումը կարող է հատկապես կործանարար լինել, եթե դրա պատճառով փոխարինվեն բնական միջավայրերը, կենսաբազմազանության տարածքները և վայրի բնության կարևոր արգելավայրերը: Բարեբախտաբար, Հայաստանն ունի պաշտպանվող և պահպանվող բազմաթիվ տարածքներ,

մասնավորապես Սևանա լճի
շրջակայքում, որը Հայաստանի
ամենագարգացած տարածքներից,


մայրաքաղաք Երևանից մոտ 60 կմ
հեռավորության վրա է գտնվում:

**Նկար 6. Մարդու ներգործության ինդեքս (2000 / 2018) և պաշտպանվող ու
պահպանվող տարածքներ, Կովկաս:**


Մարդու ներգործության ինդեքսը տրամադրում է շրջակա միջավայրի վրա մարդու
ներգործության ընդհանուր քարտեզը՝ մուգ կապույտից (ցածր ներգործություն)
մինչև վառ կանաչ (բարձր ներգործություն): 2000 թ. -ից մինչև 2018 թ. -ը մարդկային
ներգործությունն աճել է ինչպես Կովկասյան տարածաշրջանում (Ա, Բ), այնպես էլ,
մասնավորապես, Հայաստանում (Գ, Դ): Մարդու ներգործության ընդլայնումը
խնդիրներ է առաջացնում հատկապես պահպանվող տարածքներում (Ե, Չ) և
կաթնասունների բարձր կենսաբազմազանություն ունեցող տարածքներում, քանի
որ այն կարող է մարտահրավեր հանդիսանալ շրջակա միջավայրի պահպանման
համար, ինչպես նաև խթանել մարդկանց ու Գյուղատնտեսական կենդանիների
շփմանը վայրի բնության հետ, ինչը, հնարավոր է, մեծացնի հիվանդությունների
տարածման ռիսկը: ^{30, 31} Հայաստանում կան բավականաչափ պահպանվող
տարածքներ, հատկապես Սևանա լճի շրջակայքում (Չ), որոնք զգալի
հեռավորության վրա են գտնվում մարդու կողմից բարձր ներգործության
ենթարկված տարածքներից, որոնք գտնվում են Երևանի մերձակայքում:




Ա. Մարդու ներգործության ինդեքս (ՄՆԻ), Կովկաս, 2000թ.




Բ. Մարդու ներգործության ինդեքս (ՄՆԻ), Կովկաս 2018թ.




Գ. ՄՆԻ, Հայաստան, 2000




Դ. ՄՆԻ, Հայաստան, 2018



Ե. Պաշտպանվող տարածքների ՄՆԻ, Կովկաս, 2018



Զ. Պաշտպանվող տարածքների ՄՆԻ,



11.2.3 Գյուղատնտեսական կենդանիների խտություն

Փոքր տարածքներում մեծ թվով կենդանիներ կենտրոնացնելով՝ մենք մեծացնում ենք շփումները և հիվանդությունների փոխանցման հավանականությունը՝ Գյուղատնտեսական կենդանի- վայրի կենդանի, գյուղատնտեսական


կենդանի-մարդ և գյուղատնտեսական կենդանի-վայրի բնություն-մարդ շղթայով:³² Սա հատկապես ճիշտ է ինտենսիվ անասնաբուծության դեպքում, որը սովորաբար խնդիր չէ Հայաստանում՝ համեմատած տարածաշրջանի այլ մասերի հետ,

քանի որ Հայաստանի բնակչության մոտ 36%-ն ապրում է գյուղական վայրերում, իսկ փոքր տնտեսություններում հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ (հիմնականում հավեր, ոչխարներ, խոշոր եղջերավոր անասուններ և խոզեր) (Նկար 7): Այնուամենայնիվ, Երևանից դուրս՝ Արմավիրի մերձակայքում, գյուղատնտեսական կենդանիների խտությունը բարձր է: Կովկասյան տարածաշրջանում սա գյուղատնտեսական կենդանիների ամենաբարձր խտությունն է և

պոտենցիալ վտանգ է ներկայացնում կենդանուց կենդանի և կենդանիներից մարդկանց հիվանդությունների փոխանցման առումով: Ընդհանուր առմամբ, թեև զոռնոզ հիվանդությունների տարածման ռիսկը համեմատաբար ցածր է, ընդարձակ տրանսպորտային ցանցերի ավելացումը և կենդանի գյուղատնտեսական կենդանիների վաճառքն ու փոխադրումը կարող են նպաստել զոռնոզ ախտածինների առաջացմանն ու տարածմանը: ³²

Նկար 7. Գյուղատնտեսական կենդանիների խտություն, Կովկասյան տարածաշրջան, 2015 թ.

Հավերի, խոշոր եղջերավոր անասունների, այծերի, ոչխարների, ձիերի, խոզերի, գոմեշների և բադերի ընդհանուր գումարային խտությունը նշված է կապույտից (ամենաքիչ գյուղատնտեսական կենդանիներ) մինչև կարմիր (առավել մեծ թվով գյուղատնտեսական կենդանիներ) գույներով: ³³ Ա. Համեմատած տարածաշրջանի այլ մասերի, հատկապես Ադրբեջանի և Իրանի հետ՝ Հայաստանում 10 կմ² տարածքի վրա գյուղատնտեսական կենդանիների խտությունն ավելի ցածր է: Բ. Հայաստանի տարածքում կա գյուղատնտեսական կենդանիների բարձր խտությամբ մեկ տարածք (635. 000 անասուն՝ մոտավորապես 10 կմ² տարածքում)՝ Երևանից արևմուտք ընկած տարածքը, թեև երկրի մնացած տարածքներում գյուղատնտեսական կենդանիների խտությունը համեմատաբար ցածր է:



12 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը հարուստ կենսաբազմազանությամբ և փոփոխական կլիմայով երկիր է: Այն լեռնային երկիր է՝ բազմազան էկոհամակարգերով, որոնք ներառում են լեռնաշղթաներ, գետերի խորը հովիտներ, հրաբխային սարահարթեր և Արարատյան դաշտավայրը: Հայաստանի կլիման ընդհանուր առմամբ չոր է, սակայն այստեղ աճում են >3000 բուսատեսակներ՝ 5 բարձրադիր գոտիներում՝ կիսաանապատ, տափաստան, անտառ, ալպիական մարգագետին և բարձրադիր տունդրա: Տափաստանը բուսականության ամենատարածված գոտին է և բաղկացած է երաշտադիմացկուն խոտերից, փշոտ թփերից և գիհից: Ալպիական գոտում (6600 ոտնաչափ-ից բարձր) աճում է թերաճ խոտ, որը կարող է ծառայել որպես արոտավայր: Այստեղ կենդանական աշխարհը հարուստ է լեռնային հնդկահավեր, եղջյուրավոր արտույտներ, մորուքավոր անգղ, բեզոարյան այծ և լեռնային ոչխարներ (մուֆլոն): Անտառային գոտում, որը զբաղեցնում է երկրի ~10%-ը, հիմնականում թերաճ խոտ է: Այս


գոտու տարածքները կարող են լավ արոտավայրեր լինել: Այստեղ կենդանական աշխարհը հարուստ է լեռնային հնդկահավեր, եղջյուրավոր արտույտներ, մորուքավոր անգղ, բեզոարյան այծ և լեռնային ոչխարներ (մուֆլոն):

Հայաստանում կան ավելի քան 12000 կենդանատեսակներ (չնայած մեծամասնությունը միջատներ են), ներառյալ՝ 307 թռչուն և 102 կաթնասուն, այդ թվում՝ 28 տեսակի չղջիկներ և 34 տեսակի կրծողներ, որոնք հայտնի են որպես զոոնոզ վիրուսային հիվանդությունների պոտենցիալ կրողներ:^{10, 34, 35} Ցամաքային կաթնասունների տեսակների բաշխվածությունը երկրի տարածքում և տարածաշրջանում համեմատաբար հավասարաչափ է (Նկար 8): Թեև կաթնասունների տեսակների թիվը բավականին հաստատուն է, այնուամենայնիվ, կենդանիների հատուկ տեսակների թվաքանակներն աննշան տարբերվում են երկրի տարբեր մասերում (տեսակների բաշխման քարտեզներ ցուցադրված չեն):



Նկար 8. Ցամաքային կաթնասունների տեսակների առատությունը: Կովկասյան տարածաշրջան, 2022 թ. :

Այս նկարը ցույց է տալիս ցամաքային կաթնասունների տեսակների հանրագումարը կապույտից (կաթնասունների տեսակների ամենացածր թիվը) մինչև դեղին (կաթնասունների տեսակների ամենաբարձր թիվը):³⁶ Վայրի կենդանիների ավելի մեծ բազմազանությամբ տարածքները հաճախ հենց այն տարածքներն են, որտեղ վիրուսների բազմազանությունն ամենաբարձրն է, հետևաբար վայրի կենդանիների և մարդկանց կամ գյուղատնտեսական կենդանիների փոխազդեցություն դեպքում ավելի մեծ է նոր առաջացող վիրուսային հիվանդությունների հավանականությունը:^{5, 9} Ա. Կաթնասունների առատությունը համեմատաբար կայուն է ողջ տարածաշրջանում, իսկ կաթնասուններով ամենահարուստ տարածքները Սևանա լճից դեպի արևելք գտնվող տարածքներն են: Բ. Հայաստանի տարածքում 10 կմ² տարածքի հաշվով ցամաքային կաթնասունների թվաքանակի տարբերությունը փոքր է (թեև կաթնասունների տարբեր տեսակներ բնակվում են երկրի տարբեր մասերում):




Հողօգտագործման առումով Հայաստանի ավելի քան 60%-ը գտնվում է ակտիվ գյուղատնտեսության ներքո, իսկ կիսաանապատային և լեռնային տափաստանային գոտիներում այդ ցուցանիշը հասնում է մինչև 80-90%³⁹: Այնուամենայնիվ, երկրի միայն 18%-ն

է գտնվում ինտենսիվ զարգացման տակ, որտեղ բնակվում է ընդհանուր բնակչության մոտավորապես 88%-ը, իսկ երկրի 38%-ը համարվում է նվազագույն զարգացած՝ բնակչության ցածր խտությամբ³⁹:

Հայաստանում կա 38 պահպանվող տարածք (ցամաքային՝ 24.68% և ծովային՝ 0%), որոնցից 29-ի համար կատարվում է կառավարման

արդյունավետության գնահատում⁴⁰ (Նկար 9):

Նկար 9. Հայաստանի հատուկ պահպանվող տարածքները



Կա 3 ազգային պարկ, 3 պետական արգելոց և 27 պաշտպանվող տարածք³⁷: Հայաստանում կա մոտավորապես 11% անտառածածկ տարածք, որի մեծ մասը նախատեսված է պաշտպանական գործառույթների համար⁴² (Աղյուսակ 6): Ավելին, 2018 թվականին

Հայաստանը հանձն է առել մինչև 2030 թվականը վերականգնել 260,000 հեկտար անտառածածկ տարածք (թեև կառավարությունը վերանայում է այս թիվը և դեռևս նոր պարտավորվածության մասին չի հայտնել)³⁸:

Աղյուսակ 6. Հայաստանի անտառները և կենսաբազմազանությունը

Աշխարհագրական տարածաշրջան	Անտառածածկ տարածքներ	Պաշտպանական գործառույթների համար նախատեսված անտառային տարածքների մասնաբաժինը	Կենսաբազմազանության համար պահպանվող անտառային տարածքների մասնաբաժինը	Գյուղական բնակչության մասնաբաժինը
Հայաստան	11%	67%	33%	36%
Կովկասյան, միջին (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)	Կիրառելի չէ	77%	11%	44%

Տվյալներ Մանդաթերքի և գյուղատնտեսական կազմակերպության (FAO)/ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) Կովկասի և Կենտրոնական Ասիայի անտառների վիճակի մասին զեկույցից³⁸

Բացի այդ, չնայած հարստությանը, Հայաստանում կենսաբազմազանությանը սպառնացող մի շարք վտանգներ կան, որոնցից գրեթե բոլորը մարդկային պատճառներով և տնտեսական և սոցիալական ցանկություններով պայմանավորված: Այս վտանգներից են ապօրինի/չկանոնակարգված անտառահատումները, գյուղատնտեսական գործունեության տեսակները, ներառյալ գերարածեցումը և վայրի հողերի

վերածումը գյուղատնտեսական հողերի, և այլն (Աղյուսակ 7): Կենսաբազմազանության կորստի պատճառ հանդիսացող գործոններից են տնտեսական վատ պայմանները, սահմանափակ ռեսուրսների մեծ պահանջարկը, որը հանգեցնում է չկարգավորվող անտառահատումների, Շրջակա միջավայրի նախարարության ոչ բավարար ֆինանսական ռեսուրսներն և ինստիտուցիոնալ հնարավորությունները³⁸:

Աղյուսակ 7. Հայաստանում կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները և դրանց հետ կապված գործոնները

Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգներ	Կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների պատճառները
Համատեղ միջոլորտային պլանավորումը հնարավորություն է ընձեռում տարբեր ոլորտների փորձագետներին ներդրում ունենալու և ներգրավվելու «Մեկ առողջության» գործունեության մեջ հենց նախագծի սկզբից: Այսպիսով տարբեր հեռանկարներ են առաջ քաշվում նախագծերը զարգացնելու համար՝ գիտելիքների և փորձի փոխանակման և առաջադրանքների կրկնության բացառման միջոցով: Օրինակ՝ 2014 թվականին Առողջապահության և Գյուղատնտեսության նախարարությունների համատեղ հրամանով սահմանվել է յոթ գերակա

գոնոզ հիվանդությունների ցանկը, որոնք սպառնում են հանրային առողջությանը (Աղյուսակ 12): Դրանք են՝ սիբիրախտը, թռչնագրիպը, բրուցելոզը, իլնախտը, լեպտոսպիրոզը, կատաղությունը, տուբերկուլյոզը: Մշակվել են նաև ուղեցույցներ Ստանդարտների գործառնական ընթացակարգերի (SOP) հետ՝ բոլոր առաջնահերթ գոնոզ հիվանդությունների հայտնաբերման և դրանց դեմ պայքարում համատեղ մոտեցման համար¹¹: Անկախ այդ ցանկից, 2012 թ. -ին GeoHealth Hub-ի հետազոտողները Հայաստանում առողջապահական կարիքների

զնահատում կատարեցին և պարզեցին, որ հետևյալ զոռնոզ հիվանդությունները՝ սիբիրախտ,

բրուցելոզ, լեյշմանիոզ և տուլարեմիա, լուրջ խնդիր են հանդիսանում⁴⁵:

Աղյուսակ 12. Առաջնահերթ զոռնոզ հիվանդությունները Հայաստանում

<p>Հանրային առողջության համար ամենամեծ սպառնալիս հանդիսացող գերակա զոռնոզ հիվանդությունների ցանկը, որը կազմվել է Առողջապահության և Գյուղատնտեսության նախարարությունների կողմից համատեղ</p>	<p>Այլ զոռնոզ հիվանդություններ Հայաստանում</p>
<ul style="list-style-type: none"> • Սիբիրախտ • Թռչնագրիպ • Բրուցելոզ • Խլնախտ • Լեպտոսպիրոզ • Կատաղություն • Տուբերկուլյոզ 	<ul style="list-style-type: none"> • Տուլարեմիա • Քյու-տենդ • Լայմի հիվանդություն • Լեյշմանիոզ • Էխինոկոկոզ • Տենիդոզներ • Լիստերիոզ • Արբովիրուսային վարակներ • Ժանտախտ • Տրիխինելոզ • Ֆասցիոլոզ

Բացի գերակա զոռնոզ հիվանդությունների միասնական ցանկի հրապարակումից, պատրաստվածության համատեղ պլանավորումը կարող է նաև բարելավել բազմոլորտ համակարգումն ու արդյունավետությունը: Օրինակ՝ թեև Հայաստանն ունի հանրային առողջության արձագանքման ճգնաժամային ծրագիր, սակայն


տարբեր ոլորտների միջև, այդ թվում՝ իրավապահ համակարգում և անվտանգության ոլորտներում շարունակական համատեղ վերապատրաստման կարիք կա¹¹: Հանրային առողջության և «Մեկ առողջության» դերերի և պարտականությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Աղյուսակ 3-ում:

Ներդիր 2.

Սիբիրախառի բռնկում Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, 2021թ.

Սիբիրախառի բռնկում Գեղարքունիքի և Շիրակի մարզերում, 2021թ. Գյուղերում կարանտին է հայտարարվել, բոլոր շահագրգիռ կողմերի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին, էկոնոմիկայի նախարարություն, ԱԱԾ, ոստիկանություն, մարզպետարաններ, բուժհաստատություններ) անձնակազմի հետ համատեղ կազմակերպվել են կանխարգելիչ միջոցառումներ և իրազեկման լայնածավալ միջոցառումներ: Կատարվել է կասկածելի մսի/մթերքի լաբորատոր հետազոտություն, տուժած տնտեսություններում հիպերիմունային շիճուկի ներարկում և կենդանիների ընդհանուր պատվաստում: Վարակված միս հայտնաբերվել, առգրավվել և այրման միջոցով ոչնչացվել է կենդանիների թաղված վայրերում: Շահագրգիռ մարմինների համագործակցության և համատեղ գործողությունների շնորհիվ բռնկումներն արագ տեղայնացվեցին և հայտնաբերվեցին:

ANTHRAX LOCAL OUTBREAKS BY REGIONS (INCIDENCE PER 100.000 POPULATION) ARMENIA, 2012-2021



13.5 Ռիսկերի արդյունավետ և համակարգված հաղորդում

Ռիսկերի արդյունավետ հաղորդման պատասխանատվությունը կրում են բոլոր համապատասխան սեկտորները և ոլորտները, որոնք բազմոլորտ համակարգման մեխանիզմի շրջանակներում աշխատում են տեխնիկական հարցերով և քաղաքականություններով զբաղվող փորձագետների հետ: Անհրաժեշտ է փոխանակել տեղեկատվություն, խորհուրդներ և կարծիքներ և աշխատել ազդակիր բնակչության հետ՝ բացահայտելու ռիսկի գործոնները և ռիսկերի նվազեցման հնավարությունները²⁷: Միայն տեղեկատվությունը և անփութությունը կարող է հանգեցնել տնտեսական (կարող է ազդել, օրինակ, առևտրի կամ ճանապարհորդության վրա), բնապահպանական (օրինակ՝ վայրի կենդանիների ոչնչացման), սոցիալական (օրինակ՝ ստիգմա) կամ այլ հետևանքների, որոնք կարող են վատթարացնել իրավիճակը: Ավելին, առողջապահության բնագավառում ճգնաժամի ժամանակ արդյունավետ հաղորդակցության ձախողումը կարող է հանգեցնել խուճապի, հանրության ոչ բավարար տեղեկացվածության և հանրային առողջապահական մարմինների նկատմամբ հավատի կորստի⁵¹: Այսպիսով, հանրությանը ներկայացվող տեղեկատվության արդյունավետ, թափանցիկ և

համակարգված հոսքն ապահովելու համար պետք է գործի հաղորդագրությունների տարածման արդյունավետ մեխանիզմ՝ հնարավոր ապատեղեկատվությանը հակազդելու համար¹²:

Ըստ Միջազգային առողջապահական կանոններիին նվիրված Ազգային կամրջող աշխատաժողովի ժամանակ մասնակիցների քվեարկության՝ առաջնահերթ գոտնոգ հիվանդությունների վերաբերյալ հաղորդակցության բարելավումը երկրի միջոլորտային համագործակցության ամրապնդման ամենաառաջնահերթ նպատակն է եղել⁴⁷: Համեմատած այլ նպատակների հետ՝ ռիսկերի մասին հաղորդման գործընթացի բարելավումը դիտվում է որպես ավելի հասանելի և ավելի քիչ ռեսուրսներ պահանջող: Բազմաթիվ ոլորտներում լրացուցիչ փորձագետներ վարձելուց բացի, ինչը կարող է ծախսատար լինել և ֆինանսապես հնարավոր չլինել, հնարավորություն կա հետագա զարգացնելու հաղորդակցման համատեղ ռազմավարություններ և հանրային իրազեկման արշավներ առաջնահերթ գոտնոգ հիվանդությունների շուրջ: Աղյուսակ 13-ում ներկայացված է ռիսկերի մասին հաղորդման արդյունավետ գործընթացի և միջոլորտային համակարգման մարտահրավերների և հաջողության օրինակ:

Աղյուսակ 13. Բարձր ախտածին թոչնագրի պի դեմ պայքարի մարտահրավերներ և հաջողություն

Մարտահրավերներ հաղորդակցման գործընթացում	Հաջողություն համագործակցության գործընթացում
<p>Բարձր ախտածին թոչնագրի պի (HPAI)՝ համաճարակի վերածվելու հավանականությունը բարձր է: Մարդկանց սպառնացող վտանգը նվազագույնի հասցնելու համար կարևոր է կանխել ընտանի թռչունների շրջանում հիվանդության բռնկումները: Նախորդ ծրագրերը, այդ թվում՝ Համաշխարհային բանկի թոչնագրի պի դեմ պատրաստվածության նախագիծը⁵¹, ուղղված են եղել իրազեկվածության բարձրացման արշավներին՝ նախատեսված այս կենդանիների հետ ամենասերտ շփումն ունեցող մարդկանց համար: Այս նախագծերը տարբեր հաջողություններ են գրանցել: Այս արշավները հաճախ ուղղված են իրենց բակերում թռչնաբուծությամբ զբաղվող ֆերմերներին և առևտրային ֆերմերներին, նրանց աշխատակիցներին և ընտանիքներին: Արշավները ներառում են հաղորդագրություններ, որոնք նախատեսված են փոխելու թռչնամսի կառավարման հարցում նրանց գործելակերպը՝ հեռուստատեսային և ռադիոհաղորդումների, թռուցիկների, ուսումնական ծրագրերի և մանկական տիկնիկային շոուների միջոցով: Պարզվել է, որ երբեմն այս միջոցներն արդյունավետ են եղել կենսաանվտանգության միջոցառումներն ամրապնդելու համար, սակայն մրցակցող տեղական և միջազգային լրատվամիջոցները կարող են նաև շփոթություն, ապատեղեկատվություն և խուճապ առաջացնել, հատկապես բակային ֆերմերների շրջանում: Օրինակ՝ Համաշխարհային բանկի թոչնագրի պի պատրաստվածության ծրագրի ընթացքում, բարձր ախտածին թոչնագրի պի (HPAI) հետ կապված նախորդ դեպքը, երբ ֆերմերների շրջանում վախ էր տարածվել⁵¹: Ըստ համայնքներից մեկի՝ անասնաբուժության ոլորտի աշխատակիցներից մեկի գնահատման՝ բակային ֆերմերների մոտ 60 տոկոսը մորթել էր բոլոր թռչուններին, իսկ այլ հարցազրույցները ցույց են տվել, որ այս տոկոսը կարող է ավելի բարձր լինել⁵¹: Այս օրինակը ներկայացնում է այն մարտահրավերը, որին բախվում են հանրային առողջության և կենդանիների առողջության ոլորտի փորձագետները: Նույնիսկ այն դեպքում, որիսկերի նվազեցմանն ուղղված հաղորդագրությունները լավ մշակվել են, և ներգրավվել են նաև լրատվամիջոցները, գործելակերպի փոփոխության մեջ առաջընթացի հասնելը կարող է շատ դժվար լինել, իսկ ապատեղեկատվությունը կարող է նույնիսկ հանգեցնել հակառակ արդյունքի:</p>	<p>Ի դեմս հարևան երկրներում H5N1 HPAI-ի բռնկման և Թուրքիայում և Ադրբեջանում թոչնագրի պից մարդկանց մահվան դեպքերի, Հայաստանում չեն գրանցվել բարձր HPAI-ի հաստատված դեպքեր: Մա հիմնականում պայմանավորված էր կառավարության արագ արձագանքով, որը ներառում էր միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը համակարգում էր տարբեր պետական մարմինների միջև աշխատանքը⁵²: Աշխատանքային խումբն արդյունավետորեն է գործել թռչնամսի ներմուծման արգելքների իրականացման, սահմանային կետերում հսկողության և հասարակության հետ հաղորդակցության գործում: Հիվանդության դեմ պայքարում անասնաբուժական ծառայությունները կարողացել են ժամանակին ներգրավել նաև համայնքի կիսամասնավոր անասնաբույժներին և պետական տեսուչներին: Այս հաջողությունը մասամբ պայմանավորված էր նաև նրանով, որ Հայաստանը կարողացավ իր HPAI ծրագրի համար արագ միջազգային ֆինանսավորում գտնել՝ ընդամենը մի քանի ամսվա ընթացքում նախագծելով ազգային HPAI ծրագիր Թոչնագրի պի դեմ պայքարի համաշխարհային ծրագրի շրջանակներում⁵²: HPAI-ի մասին զգուշացման միջոցառումների ավարտին, ԱՄՆ ՄԶԳ-ի և Համաշխարհային բանկի լրացուցիչ աջակցությամբ, Հայաստանը զգալիորեն ընդլայնեց իր անասնաբուժական ծառայությունների հնարավորությունները թոչնագրի պի բռնկումներին նախապատրաստվելու և արձագանքելու համար՝ միաժամանակ ուժեղացնելով անասնաբուժական համակարգը որպես ամբողջություն:</p>

Հայաստանում առողջապահության ոլորտում հաղորդակցությունն ասելով, ըստ երևույթին, հասկացվում է հաղորդակցությունը արտակարգ իրավիճակների և հիվանդությունների բռնկումների ժամանակ, այլ ոչ թե ամենօրյա հաղորդակցություն և գիտական արդյունքների տարածում: Հայաստանում յուրաքանչյուր նախարարություն ունի հասարակայնության հետ կապերի բաժին, որտեղ աշխատում են վերապատրաստված խոսնակներ, սակայն համայնքների հետ ավելի ակտիվ հաղորդակցության անհրաժեշտություն կա՝ ամրապնդելու ռիսկերի մասին հաղորդման համակարգը և բարձրացնելու համայնքի վստահությունը¹¹: Թեև նախարարությունների ներսում ուղղահայաց հաղորդակցությունն ընդհանուր առմամբ լավ է աշխատում, նախորդ սիմուլյացիոն վարժությունները ցույց են տվել, որ տարածաշրջանների և գերատեսչությունների միջև փոխադարձ կապը ավելի քիչ է զարգացած¹¹:

Այս մեկուսացված հաղորդակցությունը հաճախ է դրսևորվում տեղեկատվության տարածման ժամանակ: Օրինակ՝ շատ պետական զեկույցներ հանրությանը հասանելի չեն առցանց, կամ առկա են միայն ֆիզիկական տպագիր եղանակով և չեն բաժանվում այլ գերատեսչություններին և նախարարություններին: Ավելին,

Հայաստանում ակադեմիական ամսագրերը սովորաբար միայն տպագիր են և հասանելի չեն առցանց, ինչը խոչընդոտում է գիտական բացահայտումների լայնածավալ տարածմանը: Սա խոչընդոտում է ակադեմիական ոլորտի և կառավարության միջև պոտենցիալ համագործակցությանը, քանի որ ոլորտները, ամենայն հավանականությամբ, կարող են տեղյակ չլինել՝ ինչ հետազոտություններ են անցկացնում մյուս ոլորտները:

Կարևոր է նշել, սակայն, որ գրախոսվող հետազոտական հոդվածների կանոնավոր կերպով հրապարակումը միշտ չէ, որ պետք է հանձնարարվի կառավարության կողմից: Դա պարտադիր պայման չէ «Մեկ առողջության» արդյունավետ գործունեության համար: Նախարարությունները կարող են համագործակցել, բայց արդյունքների հրապարակումը համատեղ չլինի: Բացի այդ, Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է, ուստի ոչ պաշտոնական հաղորդակցությունը, ներառյալ WhatsApp-ից օգտվելը, տարածված երևույթ է և կարող է արդյունավետ լինել: Այդուհանդերձ, խորհուրդ ենք տալիս լրացուցիչ շեշտադրում անել գիտական հաղորդակցության օղակների ամրապնդման վրա, որպեսզի հետազոտություններն ավելի հեշտությամբ տարածվեն քաղաքականությունների մշակողների և հանրության շրջանում:

Վերջերս հեռուստատեսությունը սկսել է ավելի մեծ ուշադրություն հատկացնել գիտական կյանքին և, առհասարակ, գիտական հետազոտություններին: Որոշ հաղորդումներ նվիրված են լինում նաև գոռնոզների խնդիրներին և գոռնոզների ուսումնասիրությամբ զբաղվող գիտական խմբերին: Սակայն, շատ հաճախ, տեղեկատվությունը ներկայացվում է ոչ արհեստավարժ լրագրողների

կողմից, միակողմանի կամ սխալ մեկնաբանություններով, ինչի պատճառով իրական պատկերը տուժվում է: Այս պատճառով նման զգայուն հարծը պետք է լուսաբանվի միայն լուրջ ՋԼՄ-ների ներկայացուցիչ, արհեստավարժ լրագրողների կողմից, միայն գիտական հիմնարկության ղեկավարության և համապատասխան մասնագետների հետ համաձայնեցվելուց հետո:



13.6 «Մեկ առողջության» շրջանակում աշխատուժի զարգացում

«Մեկ առողջության» շրջանակում աշխատուժի զարգացումը ներառում է ուսումնական և վերապատրաստման ծրագրերի մշակման շարունակական գործընթաց՝ անհատներին տալու գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են աշխատուժի ազգային և միջազգային պահանջարկը բավարարելու և իրենց ոլորտում հետազոտությունների և լավագույն փորձի առումով ժամանակին համընթաց քայլելու համար²⁷: Այս աշխատուժի մեջ են մտնում բժիշկներ, անասնաբույժներ, բիովիժակագրության մասնագետներ, գիտնականներ, լաբորատոր տեխնիկներ, ֆերմերներ, մաքսային և սահմանային գործակալներ, կապի և անվտանգության փորձագետներ և այլք, ովքեր կարող են համակարգված կերպով համագործակցել՝ իրագործելու Միջազգային առողջապահական կանոններով (IHR) և Անասնաբուժական ծառայությունների աշխատանքի (PVS) գնահատմամբ սահմանված հիմնական առաջադրանքները¹¹: Կարևոր է պատրաստել և պահպանել առողջապահության ոլորտում բարձր որակավորում ունեցող կադրերի, որոնք կունենան համապատասխան վերապատրաստումներ, գիտական հմտություններ և փորձառություն՝ երկար ժամանակ առողջապահական համակարգերը պահպանելու համար¹¹: Պետք է կազմակերպել արդյունավետ ուսուցում ինչպես

«նախքան ծառայության անցնելը», այսինքն՝ նախքան անձի գիտական աստիճան կամ աշխատանք ստանալը, այնպես էլ «ծառայության ընթացքում», ինչը կապահովի աշխատակիցների շարունակական ուսուցումը: Կայուն զարգացման նպատակներին հասնելու շեմը պետք է լինի 4,45 բուժաշխատող՝ 1000 մարդու հաշվով⁵³:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանում անասնաբույժների թիվը զգալիորեն նվազել է: 2015-2017 թվականների ընթացքում երկրում եղել է մոտ 1323 անասնաբույժ: Այս թիվը 2018 թվականին նվազել է մինչև 853, իսկ 2019 թվականին՝ 590⁵⁴ (Աղյուսակ 14): մասնագիտությունը չի համարվում գրավիչ ծանր աշխատանքային պայմանների ի ցածր աշխատավարձի պատճառով, ուստի շատ քիչ նոր, երիտասարդ մասնագետ է գալիս այս ոլորտ (): Հայաստանում անասնաբույժների թիվն այժմ բավական ցածր է՝ հաշվի առնելով, որ երկրում անհրաժեշտ է առնվազն 600 անասնաբույժ՝ ըստ համատեղ արտաքին գնահատման շեմի: Անասնաբուժության ոլորտում աշխատողների թիվը նույնպես կտրուկ նվազել է՝ 2018 թ. -ին գրանցված 635-ից 2019 թ. -ին հասնելով 240-ի⁵⁵: Եվ հակառակը, հանրային սեկտորում անասնաբուժության ոլորտում աշխատող անձնակազմի թիվը անշեղորեն աճել է վերջին մի քանի

տարիների ընթացքում՝ 2015 թ. -ին գրանցված 87-ից 2018-ին հասնելով 163-ի⁵⁴: Անհասկանալի է, թե հատկապես ինչն է պատճառ դարձել այս միտումների: Այս խառը արդյունքները ցույց են տալիս, որ պետք է անցկացվեն կենդանիների առողջության և պարասնասնաբուժական մասնագետների վերապատրաստումներ, որոնք արդեն մեկնարկել են ՀԱԱՀ-ում, և պատրաստվել է մի քանի տասնյակ պարասնասնաբույժ/վակցինատոր, որոնք իրականացվում են միայն պետպատվերի շրջանակներում նախատեսված ախտորոշիչ և կանխարգելիչ անասնաբուժական միջոցառումները Այնուամենայնիվ, անասնաբուժության ոլորտի կադրերի և ռազմավարության խորը դիտարկումը կարող է օգտակար լինել անասնաբուժական կադրերի բարելավման գործում:

Ինչ վերաբերում է մարդկանց առողջությանը, ապա բժիշկների թիվը 2015 թ. -ի 10. 000 բնակչի հաշվով 29-ից 2019 թ. -ին հասել է 44-ի՝ 10. 000 բնակչի հաշվով⁵⁵: Բնապահպանության և մասնագիտական առողջության ոլորտի մասնագետների թիվը Հայաստանում պարզ չէ, քանի որ տվյալներն այնքան էլ մատչելի չեն: Թեև հիվանդությունների փոխանցողների կառավարման ոլորտում աշխատող անձնակազմի առումով կան հստակ դերեր և

պարտականություններ, սակայն կամարդկային ռեսուրսների զարգացման պլանի անհրաժեշտություն⁴⁴: Ավելին, պետական մակարդակի աշխատողները, մասնագետները, ինչպես նաև տարածաշրջանային մակարդակի անձնակազմը բոլորն էլ վերապատրաստված են հիվանդությունների փոխանցիչների մշտադիտարկման և վերահսկման գործողությունների համար, սակայն դեռևս կա կարողությունների զարգացման և վերապատրաստման կարիք՝ կապված փոխանցողների հայտնաբերման, մոլեկուլային կենսաբանության և աշխարհագրական տվյալների համակարգով (GIS) քարտեզագրման հետ⁴⁴:

Ինչ վերաբերում է վերապատրաստմանը և մասնագիտական զարգացմանը, անասնաբույժները պարբերաբար մասնակցել են Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագրին (SC-FELTP), սակայն պարզ չէ, թե անասնաբույժների քանի տոկոսն է վերապատրաստվում կենդանիների առողջության թեմայով՝ որպես հանրային առողջության ասպեկտները ներառող ոլորտ¹¹:

Գոյություն ունեն ՀԱԱՀ բուհական ուսումնական ծրագրեր՝ “Համաճարակաբանություն և կենդանիների ինֆեկցիոն հիվանդություններ” և “Մակաբուժաբանություն և

կենդանիների ինվազիոն հիվանդություններ», ինչպես նաև մագիստրատուրայում «Կենդանիների վարակիչ հիվանդություններ» առարկան: Կենսանվտանգություն և կենսապահովությունորպես առանձին մասնագիտություն գոյություն չունի, սակայն որպես առանձին առարկա այն դասավանդվում է անասնաբույժ և անասնաբուժասանիտարական փորձագետ մագիստրանտների ՆԱԱՀ-ում: ԵՊՀ կենդանաբանության ամբիոնում գործում է մագիստրոսական ծրագիր «Կենդանաբանություն և մակաբուծաբանություն», որտեղ մի շարք առարկաներ են դասավանդվում , որոնք Մեկ առողջություն» մոտեցման հարցերի հետ են կապված: ՊԼանավորվում է 2024-2025ուս տարում ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում բացել նոր մագիստրոսական ծրագիր, որում փոքր կրթական բոլի նվիրված կլինի «Մեկ առողջություն» -ը:

Բժիշկները, համաճարակաբանները և մարդու առողջության ոլորտի մյուս մասնագետները նույնպես կշահեն «Մեկ առողջության» թեմայով վերապատրաստումից (հատկապես կենդանիների առողջության հետ կապված), հետևաբար, բժիշկների, անասնաբույժների և կենդանիների առողջությամբ զբաղվող համայնքային աշխատողների վերապատրաստման ծրագրերի ավելացումը, հատկապես գյուղական վայրերում, շահավետ կլինի և կարող է հնարավորություն ընձեռել՝ ամրապնդելու համակարգումը և համատեղ ուսուցողական վերապատրաստումները «Մեկ առողջություն» մոտեցման միջոցով: Օրինակ՝ Հայաստանը կարող է հարմարեցնել «Մեկ առողջության» աշխատանքի հիմունքների, հիվանդությունների բնկումների հետաքննության և արձագանքման, ռիսկերի մասին հաղորդման, դրամաշնորհների մշակման և այլնի մասին:⁵⁶



Աղյուսակ 14. «Մեկ առողջության» աշխատուժի ցուցանիշներ երկրի մակարդակով

Ցուցանիշ	Արժեք	Տարի	Աղբյուր
Անասնաբույժներ (թիվը)	590	2019	Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն- Կենդանիների առողջության համաշխարհային տեղեկատվական համակարգ (WOAH-WAHIS)
Անասնաբուժության ոլորտի հանրային մասնագետներ (թիվ)	163	2018	Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն- Կենդանիների առողջության համաշխարհային տեղեկատվական համակարգ (WOAH-WAHIS)
Անասնաբուժության ոլորտի համայնքային աշխատողներ (թիվ)	240	2019	Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն- Կենդանիների առողջության համաշխարհային տեղեկատվական համակարգ (WOAH-WAHIS)
Բժիշկներ (թիվ)	12964	2017	Առողջապահության աշխատուժի ազգային հաշիվների տվյալների բազա, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև
Բժիշկներ (յուր. 10. 000 մարդու հաշվով)	44.02	2017	Առողջապահության աշխատուժի ազգային հաշիվների տվյալների բազա, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև
Բուժքույրական անձնակազմ (ընդհանուր)	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Առողջապահության աշխատուժի ազգային հաշիվների տվյալների բազա, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև

Շրջակա միջավայրի և աշխատանքի առողջության և հիգիենայի մասնագետներ (թիվ)	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Առողջապահության աշխատուժի ազգային հաշիվների տվյալների բազա, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև
Բժշկական և ախտաբանական լաբորատոր գիտաշխատողներ (թիվ)	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Առողջապահության աշխատուժի ազգային հաշիվների տվյալների բազա, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև
Մարդկային ռեսուրսներ (Միջազգային առողջապահական կանոններին Մասնակից պետությունների ինքնազնահատման տարեկան հաշվետվություն (IHR SPAR)) (0-100)	100	2020	IHR Միջազգային առողջապահական կանոններին Մասնակից պետությունների ինքնազնահատման տարեկան հաշվետվություն (IHR SPAR)
Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիր (FETP)	Շուրջ 30	2009-2016	Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիր
Արևելյան Եվրոպայի և հարավային Կովկասի Դաշտային համաճարակաբանության ուսուցման միջանկյալ ծրագիր (FETP)	8	2021-ից սկսած	Արևելյան Եվրոպայի և հարավային Կովկասի Դաշտային համաճարակաբանության ուսուցման միջանկյալ ծրագիր (FETP)
Դաշտային համաճարակաբանության ուսուցման ծրագիր (FETP) առաջնագիծ (Հայաստան)	4 կոհորտ՝ 50	2021-2022	Դաշտային համաճարակաբանության ուսուցման ծրագիր (FETP) առաջնագիծ (Հայաստան)
Դաշտային համաճարակաբանության ուսուցման ծրագիր (FETP) միջանկյալ (Հայաստան)	1 կոհորտ	2023	Դաշտային համաճարակաբանության ուսուցման ծրագիր (FETP) միջանկյալ (Հայաստան)
Աշխատուժի արդի բազմալորտ ռազմավարություն (1-5)	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Համատեղ արտաքին գնահատում (JEE)

«Մեկ առողջության» հզոր աշխատուժի մեկ այլ հիմնական ցուցանիշ է մարդկանց և կենդանիների առողջության ոլորտում անխափան լաբորատոր համակարգը: Լավ գործող համակարգը կարող է աջակցել հիվանդությունների բռնկումների դեմ պայքարին և բռնկումների կառավարմանը, այդ թվում՝ կենդանիների, սննդի, ջրի և շրջակա միջավայրի նմուշների ախտորոշման միջոցով: Լաբորատորիաների բարեփոխմանն ուղղված վերջին նախագծի ընթացքում, որը նպատակաուղղված էր բարելավելու որակի կառավարման համակարգերը ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիների համար նախատեսված լաբորատորիաներում, զգալի բարելավում նկատվեց 2017-2020 թվականների ընթացքում՝ կազմակերպչական կառուցվածքի,

մարդկային ռեսուրսների, սարքավորումների կառավարման, մատակարարման շղթայի և տվյալների կառավարման առումով⁵⁷: Լաբորատորիաների բարելավման ամենամեծ խոչընդոտը որակի և կենսաանվտանգության կառավարիչների և համապատասխան մենթորության բացակայությունն էր՝ կենտրոնական լաբորատորատորիաներից մինչև մարզային լաբորատորիաներ⁵⁷: Մինչ Հայաստանում լաբորատորիաների հնարավորությունները բարելավվում են, խորհուրդ է տրվում իրականացնել նաև կառավարման շարունակական ուսուցում և գիտելիքների փոխանակում մարդկանց և անասնաբուժական լաբորատորիաների մասնագետների միջև:

13.6.1 Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագրեր

Հայաստանի աշխատուժի ուշագրավ բաղադրիչը նրա մասնակցությունն է Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագրին (SC-FELTP): «Մեկ առողջության» ոլորտում վերապատրաստման այս համատեղ ծրագիրը նախատեսված է համաճարակաբանների, կլինիկական մասնագետների, լաբորատոր տեխնիկների և անասնաբույժների հսկողության, նմուշների հավաքման, լաբորատոր փորձարկումների և այլ հմտությունների զարգացման համար: Հայաստանն այժմ անցել է Դաշտային համաճարակաբանության

ուսուցման ծրագրի (FETP) առաջնային և EE FETP-ի միջանկյալ ծրագրերին:

Ի հավելումն Հարավային Կովկասի դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագրի (SC-FELTP), Հայաստանը ներկայումս ունի իր սեփական Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիրը (FETP) Հայաստանում, որը 2021 թվականին SC-FELTP-ի շրջանավարտների կողմից: Հայկական Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիրը

(FETP) Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (NCDC) և ՀՀ Առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի, էկոնոմիկայի նախարարության և Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համագործակցության արդյունքն է⁵⁸: Այս FETP-ի նպատակը նման է SC-FELTP-ի նպատակին, քանի որ այն

պատրաստում է ազգային, տարածաշրջանային և շրջանային դաշտային համաճարակաբանների՝ ուժեղացնելու համաճարակների կառավարումը, պատրաստվածությունը և արձագանքումը Հայաստանում: FETP-ի շրջանավարտների առաջին խումբը (~40 հոգի) իրենց վերապատրաստումն ավարտել է 2022 թվականին:

13.7 Մշտադիտարկումը, գնահատումը և «Մեկ առողջության»

շրջանակում կատարվող գործողությունների մասին հաղորդումը

Հանրային առողջության ոլորտում ակնկալվում է մշտադիտարկում, գնահատում և հաշվետվություն՝ ըստ ընդհանուր որակական և քանակական ցուցանիշների ընդարձակ ցանկի: Կենդանիների առողջության ցուցանիշները նույնպես լայն տարածում ունեն, բայց դրանք հաճախ արտացոլում են հիվանդությունների բացակայությունը կամ պոպուլյացիաների տարածվածությունը, այլ ոչ թե ֆիզիկական և մտավոր բարեկեցության ընդհանուր վիճակը, ինչը պայմանավորված է ընտանի կենդանիների և տնտեսական արտադրողականության միջև կապերի պատճառով⁵⁹: Շրջակա միջավայրի առողջության ցուցանիշները մարդ-կենդանի-շրջակա միջավայր եռյակում ավելի

աղոտ են սահմանված⁵⁹, և հաճախ կապված են մարդու առողջության վրա դրանց ազդեցության հետ: Այդ ցուցանիշներից են կլիմայի փոփոխությունը, աղտոտվածությունը, հողածածկույթի վիճակը, ոչ անվտանգ ջուրն ու սնունդը: Ընդհանուր առմամբ, մարդ-կենդանի-շրջակա միջավայր շփման տարածքներում առկա խնդիրները և միջամտությունների գնահատման համընդհանուր չափորոշիչներ և մեթոդներ չկան, ինչը դժվարացնում է «Մեկ առողջության» քանակական արժեքի հաշվումը^{12, 59}: «Մեկ առողջության» չափման, գնահատման և հաշվետվության հատուկ մեթոդները դուրս են այս զեկույցի շրջանակը, սակայն մի քանի օրինակներ կարելի է գտնել այս զեկույցի հղումներ բաժնում՝ հավելյալ տեղեկությունների համար^{12, 27, 59-62}:

Թեև «Մեկ առողջության» յուրաքանչյուր ծրագիր ունի տարբեր նպատակներ, արդյունավետ ծրագրերը պետք է ներառեն բազմաոլորտային ցուցիչներ, որոնք, օրինակ, գնահատում են համակարգերը, համակարգման գործընթացը, պլանավորումը և վերապատրաստումը և հիմնված են որոշակի համատեքստում փոփոխության հիմնավոր տեսլականի վրա^{12, 59}: «Մեկ առողջության» ծրագրերը կարող են և դեռևս հաճախ ներառում են կոնկրետ հիվանդությանը հատուկ թիրախներ, որոնք կարող են օգտակար լինել կոնկրետ օրինակների ներկայացման և քննարկումներում կոնկրետություն ապահովելու տեսանկյունից¹²:

Համաշխարհային բանկի «Մեկ առողջության» գործառնական կառուցվածքով առաջարկվում են բարձր մակարդակի մի քանի ազգային ցուցանիշներ, որոնք մեկնարկային կետ են ստեղծում «Մեկ առողջության» ազգային հնարավորությունների գնահատման համար:

1. Մարդու, կենդանիների և շրջակա միջավայրի առողջության հիմնական գնահատումները, օրինակ՝ ըստ Միջազգային առողջապահական կանոնների (IHR) տարեկան ինքնագնահատումները, Համատեղ արտաքին գնահատումը (JEE) և and

Անասնաբուժական ծառայությունների աշխատանքի գնահատումը (PVS) և հանրային առողջության ոլորտի հիմնական գործընթացների գնահատումը արդի են:

2. Առաջընթաց ազգային կամ տարածաշրջանային «Մեկ առողջության» ակտիվ, ֆունկցիոնալ հարթակի ստեղծման ուղղությամբ, օրինակ՝ «Մեկ առողջության» բազմոլորտ համակարգման ազգային մեխանիզմի (MCM) ստեղծումը:
3. Արձագանքման մշակված, կիրառված և արդիական ազգային պլաններ, օրինակ՝ առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիր, կենսաբազմազանության բնագավառում գործողությունների ազգային պլան, հանրային առողջության ծգնաժամային պատրաստություն, անասնաբուժական ծառայությունների բացերի վերլուծություն և այլն:
4. Համաճարակաբանության ուսուցման արդեն կիրառված ծրագիր, օրինակ՝ Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիր (FELTP), որը նախատեսված է մարդու հիվանդությունների

համաճարակաբանների,
ինչպես նաև տնային և վայրի
կենդանիների
անասնաբույժների համար:

5. Հիվանդություններին հատուկ
թիրախներ (օրինակ՝
բրուցելյոզ, խոզերի աֆրիկյան
ժանտախտի (ASF),
տուբերկուլյոզ և այլն):

Հայաստանը կիրառել է վերը նշված
բարձր մակարդակի ազգային
ցուցանիշներից մի քանիսը, այդ
թվում՝ մշակել է գնահատման

մեխանիզմներ, գործողությունների
ազգային ծրագրեր և մասնակցել է
Հարավային Կովկասի դաշտային
համաճարակաբանության և
լաբորատոր ուսուցման ծրագրին:
Այնուամենայնիվ, չկա հատուկ
համակարգ, որը համակարգված
կերպով կվերահսկի և կգնահատի
գոռնոզ հիվանդությունների դեպքերի
արձագանքները, չկա նաև
համայնքային մոբիլիզացիա և
հաղորդակցություն, ուստի խորհուրդ
ենք տալիս ստեղծել նման
համակարգ^{11, 44}:



14 ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

14.1 Բազմոլորտ մոտեցման կիրառում ընդերային լեյշմանիոզի դեմ պայքարում

2018 թվականին Երևանի մասնավոր սեկտորի անասնաբույժների և շների սիրահարների ակումբների միջև սկսեց ձևավորվել համագործակցություն ընդերային Լեյշմանիոզի (VL) համաճարակի պատճառով: Հետագոտված 52 շներից անասնաբույժները հայտնաբերեցին ընդերային լեյշմանիոզի 11 (20.8%) դրական արդյունքով ընտանի շներ, որոնց մոտ առկա էին կլինիկական նշաններ(քաշի կորուստ, մազաթափություն, քթից արյունահոսություն և այլն): Մինևույն ժամանակ, բնակչությունը, ինչպես նաև Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի (ՀՀ ԳԱԱ) Կենդանաբանության ինստիտուտի գիտնականները վայրի շնագայլերի պոպուլյացիայի աճ են նկատել այն նույն տարածքում, որտեղ հիվանդացությունը ԸԼ-ն ամենաբարձրն էր վերջին տարիներին (Սյունիքի, Լոռու և Տավուշի մարզեր): Լեյշմանիայի էկոլոգիայի փոխանցման դինամիկան, ներառյալ վայրի և ընտանի կենդանիների միջև, և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետ ռազմավարություններ մշակելու համար համեմատական հետազոտություն է սկսվել:

Իրականացվել է դաշտային աշխատանք՝ վարակված շնագայլեր հայտնաբերելու և դրանց կենսաբանական նմուշները ընտանի շների հետ համեմատելու համար: «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական Լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ղեկավարել է ընդերային լեյշմանիոզից առավել տուժած Հայաստանի երեք մարզերում 90 շնագայլի և 90 շան համեմատական հետազոտություն: Անասնաբույժների ներկայությամբ որսացել են շնագայլեր և տեղում նմուշառվել: Ընտանի շները նմուշառվել և փորձարկվել են rK39 թեստերով: Իննսուն (90) շնագայլ հետազոտվել է rK39 թեստով, որոնցից 15 (16.7%) ընդերային լեյշմանիոզի արդյունքը դրական է եղել: Իննսուն (90) ընտանի շուն հետազոտվել է rK39 թեստերով, որոնցից 10-ը (11,1%) եղել են դրական: Հետազոտությունը ցույց է տվել, որ ն' ընտանի շները, և՛ վայրի շնագայլները կարող են լինել ընդերային լեյշմանիոզի կրողներ: Հետազոտության մեջ ընդգծվում է հիվանդությունների հայտնաբերման և զոռնոգ հիվանդությունների հետազոտության բազմապրոֆիլ մոտեցում, որի ժամանակ «Մեկ առողջության» հետ կապված

խնդիրները հայտնաբերելու գործում
ներգրավվում են մասնավոր սեկտորի
անասնաբույժները,
կենդանաբանության և գիտության
պետական ինստիտուտները և
հանրության լայն շերտերը:
Բնակչության շրջանում

իրականացվել են իրազեկման
աշխատանքներ, ԱՆ, ՀՎԿԱԿ-ի
կայքերով, լրատվամիջոցներով,
տրամադրվել է տեղեկատվություն,
բժշկական կազմակերպություններում
փակցվել են պաստառներ և այլն:



**15 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԸ՝
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ՄԵԿ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ»
ՆԵՐԴՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Աղյուսակ 15. Առաջարկություններ՝ Հայաստանում «Մեկ առողջության» առաջխաղացումն ապահովելու համար

Առաջարկություն	Հիմնավորում
	<p>«Մեկ առողջության» բազմալորտ մարմնի հիմքն արդեն կա: Գործում են մի քանի տեխնիկական աշխատանքային խմբեր, որոնք արդեն աշխատում են «Մեկ առողջության» հետ կապված խնդիրների ուղղությամբ, այդ թվում՝ միջկառավարական կենսաապահովության և կենսաանվտանգության աշխատանքային խումբը (Անվտանգության խորհրդի գրասենյակին կից), աշխատանքային խումբը, որը մշակում է կենսաանվտանգության նոր կտրենքը, և Զոռնոզ հիվանդությունների ազգային միջգերատեսչական ղեկավար կոմիտեն:</p>
<p>Ավարտին հասցնել «Մեկ առողջության» հարցերով ազգային կոմիտեի ստեղծումը:</p>	<p>Տեխնիկական մակարդակում կա կառավարության շահագրգռվածություն, այդ թվում՝ Առողջապահության նախարարությունում, Էկոնոմիկայի, Շրջակա միջավայրի, Տարածքային կառավարման նախարարություններում, ինչպես նաև ակադեմիական շրջանակներում:</p>
<p>Կոմիտեի ստեղծումից հետո հասկացնել</p>	<p>«Մեկ առողջության» բազմալորտ ազգային կոմիտեի ստեղծմամբ կխթանվի համախմբվածությունը նախարարությունների միջև, քանի որ դրանք կգործեն ըստ ընդհանուր նպատակի, կբարելավվի միջգերատեսչական հաղորդակցությունը, և կկրճատվեն կրկնվող նախագծերը:</p>
<p>Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կոմիտեն կարողանա իրականացնել իրեն լիազորված ծրագրերը</p>	<p>«Մեկ առողջության» բազմալորտ ազգային կոմիտեն կօգնի վերացնելու այն տարածված տեսակետը, որ առողջությունը բացառապես Առողջապահության նախարարության պատասխանատվության տիրույթում է, ինչը կօգնի փոխելու մարդկանց մտածելակերպը «Ինչի՞ համար եմ ես պատասխանատու»-ից «Ի՞նչ պետք է անել մեր կոլեկտիվ առողջությունը բարելավելու համար», ընդլայնելու մուտքի կետերը՝ վերականգնման միջոցով հիվանդությունների կանխարգելման արդյունավետ ջանքերի ներդրման համար:</p>
	<p>Որպեսզի «Մեկ առողջության» բազմալորտ ազգային կոմիտեն լինի իսկապես բազմալորտ մարմին, այնտեղ պետք է ներկայացված լինեն Առողջապահության, Շրջակա միջավայրի և Էկոնոմիկայի նախարարությունները (ներառյալ Գյուղատնտեսության նախարարությունը), Անվտանգության խորհուրդը, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը, Մանկավարժական անվտանգության տեսչությունը, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Գիտությունների ազգային ակադեմիան, ակադեմիական ոլորտը և պոստենցիալ այլ</p>

	<p>հաստատություններ (օրինակ՝ Կրթության, Էկոնոմիկայի նախարարությունները)</p>
<p>Ավարտին հասցնել Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը (NAPHS)՝ այնտեղ ներգրավելով պետական փորձագետների բազմալորտ խումբ</p>	<p>Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը (NAPHS) ավարտին հասցնելու գործընթացը կարևոր հնարավորություն է առաջ բերում՝ հիվանդությունների կանխարգելման, հայտնաբերման և արձագանքման ոլորտում բազմալորտ ներգրավվածություն ապահովելու համար: Հատկապես գոնոզ հիվանդությունների առաջացման և տարածման գործոնների հաշվառումը կարող է օգնել հստակեցնելու բազմաթիվ ոլորտների կարևորությունը և հեշտացնելու համապատասխան ոլորտների ներգրավվածությունը Օրագրի մշակման և իրականացման մեջ:</p> <p>Առողջապահության անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագիրը (NAPHS) արդյունքում ստեղծվում է գործողությունների պլան, ուստի ի սկզբանե բազմալորտ մոտեցման շնորհիվ կարելի է պատշաճ կերպով բացահայտել, թե ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ յուրաքանչյուր ոլորտի համար: Ակնկալվում է, որ դա կհանգեցնի ավելի ծախսարդյունավետ մոտեցումների, երբ ավելի շատ աշխատում են կանխարգելման ուղղությամբ տիպիկ արձագանքման մեխանիզմի վրա հիմնվելու փոխարեն:</p> <p>Այնպիսի գործիքները, ինչպիսիք են կարողությունների գնահատման մեխանիզմները և ազգային պլանները, որոնք համատեղ մշակվում են տարբեր ոլորտների և շահագրգիռ կողմերի համագործակցությամբ, հանգեցնում են ավելի ուժեղ արդյունքների, ոլորտների միջև համակարգման, համագործակցության և վստահության բարելավման և, ընդհանուր առմամբ, «Մեկ առողջության» ավելի ուժեղ համակարգի⁴²:</p> <p>Հաճախ նկատվում է գնահատումների ծանրաբեռնվածության մասին, ինչը երբեմն փաստում է, որ բացահայտվել է նախորդ գնահատումների ընթացքում լուծված բացթողումները չեն լուծվել: Համակարգման բարելավումը և շահագրգիռ կողմերի քարտեզագրումը թույլ են տալիս հստակ ուշադրություն դարձնել ուշադրության կարիք ունեցող ոլորտներին, այդ թվում՝ համապատասխան դերերին, պարտականություններին և ռեսուրսներին՝ խթանելու համակարգի աստիճանական հզորացումը և պատրաստվածությունը:</p>
<p>Մշակել նորացված «Կենսաբազմազանության ազգային ռազմավարություններ և գործողությունների ծրագրեր» (NBSAP)՝ համաձայն Կողմերի 15-րդ համաժողովը</p>	<p>Ամենավերջին NBSAP-ը նախատեսված էր 2016-2020 թվականների ժամանակաշրջանի համար և արդեն ավարտվել է, իսկ նորը դեռևս էպետք է մշակվի:</p> <p>NBSAP-ներով, որպես կանոն, ղեկավարում են երկրների էկոհամակարգի և կենսաբազմազանության կառավարման առաջնահերթություններն ու գործողությունները: Նոր պլանի մշակումը հնարավորություն է տալիս նպաստելու հիվանդությունների ռիսկերի նվազեցմանը՝ ստեղծելով սիներգիա Հայաստանի Կենսաբազմազանության ազգային ռազմավարությունների և</p>

(COP 15) նոր
շրջանակի

Բարձրացնել
հանրային
իրազեկվածությունը
գոռնոգ
հիվանդությունների
տեսանկյունից
կենսաբազմազանությ
ան պահպանման
կարևորության և
վայրի բնության հետ
փոխազդեցության
վերաբերյալ
անվտանգ
պրակտիկաների
վերաբերյալ

գործողությունների ծրագրերի (NBSAP) և Առողջապահության
անվտանգության բնագավառում գործողությունների ազգային ծրագրի
(NAPHS) միջև, որը դեռևս պետք է ավարտին հասցվի:

Էկոտուրիզմը, մասնավորապես՝ քարանձավների
ուսումնասիրությունը, խնդիր է Հայաստանում, և ներկայումս շատ քիչ
պաշտպանիչ միջոցներ կան՝ կանխելու մարդկանց/վայրի բնության
շփումը այս վայրերում, որոնցից մի քանիսում բնակվում են բարձր
ռիսկային տեսակներ, օրինակ՝ չղջիկներ, որոնք կարող են գոռնոգ
վարակներ փոխանցել:

«Բնապահպանական մտածելակերպի ձևավորումը» և
բնապահպանական կրթության ընդլայնումը Ազգային
անվտանգության ռազմավարության հաստատված նպատակներից
մեկն է, որը հնարավորություն է ընձեռում առաջընթաց գրանցելու
ինչպես շրջակա միջավայրի առողջության, այնպես էլ ազգային
անվտանգության ոլորտում «Մեկ առողջություն» հովանու ներքո²⁶:

Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը
հաջողության են հասել, օրինակ, Հիվանդությունների վերահսկման և
կանխարգելման ազգային կենտրոնը (NCDC) նախկինում
համագործակցել է զբոսաշրջային գործակալությունների հետ՝
տեղեկատվություն տրամադրելու զիկա վիրուսի մասին:

Զբոսաշրջային գործակալությունների և Հայաստանի կառավարության
միջև պետական և մասնավոր սեկտորների համագործակցությունը
կարող է օգնել գովազդելու մասնավոր զբոսաշրջային բիզնեսը՝
անվտանգ էկոտուրիզմի խթանման միջոցով:

Հայաստանը հարուստ է կենսաբազմազանությամբ, և այս
կենսաբազմազանության մասին հանրային իրազեկվածության
բարձրացումը կարող է գրավել այն մարդկանց, ովքեր հետաքրքրված
են սեփական առողջության պահպանմամբ (օրինակ՝ կենդանիներից
մարդկանց հիվանդությունների փոխանցման կանխարգելում),
մարդկանց, ովքեր հետաքրքրված են կլիմայի փոփոխություններով
(կենսաբազմազանությունը և շրջակա միջավայրի պահպանումը
կարևոր դեր են կատարում կլիմայի փոփոխությունների հետ կապված
բացասական հետևանքները մեղմելու հարցում): Մարդիկ կարող են
շարունակել վայելել Հայաստանի բնության գեղեցկությունը
էկոտուրիզմի միջոցով, պարզապես ավելի ապահով եղանակով:

Ներկայումս զբոսավարներին առաջարկվող կրթությունը
սահմանափակ է (օրինակ՝ մի քանի ոչ պաշտոնական հանդիպումներ
զբոսավարների և ակադեմիական/հետազոտող փորձագետների հետ):
Այս ուսուցման հիմնականում նեղ ուղղվածություն ունեն.
կենտրոնացած են կենդանիների առողջության վրա, սակայն չեն
տրամադրում համապատասխան տեղեկատվություն գոռնոգ
հիվանդության ռիսկերի կամ շրջակա միջավայրի պահպանման
մասին:

Բարելավել առողջության հետ կապված տեղեկատվության թափանցիկությունն ու ժամանակին տարածումը լրացուցիչ սեկտորների, վարչությունների և ակադեմիկոսների շրջանում

Ընդլայնել գոտնոգ հիվանդությունների մշտադիտարկումը և հսկողությունը վայրի բնության մեջ՝ ոչ մահաբեր մեթոդների կիրառմամբ

Աշխատուժի ուսուցում

Անհրաժեշտ է համոզվել, որ ազգային ծրագրերը, կարողությունների գնահատումը և գործիքները, հետազոտական հրապարակումները և հարակից փաստաթղթերը հանրության համար հասանելի և մատչելի լինեն առցանց, ոչ միայն տպագիր տեսքով: Մա կնպաստի աշխատանքի թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Չնայած Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է, և ոչ ֆորմալ հաղորդակցությունը կարող է բավականին օգտակար լինել, նախարարությունների և ակադեմիական շրջանակների հետ կապի պաշտոնական մեխանիզմների ընդլայնումը կօգնի փորձագիտական շահագրգիռ կողմերի ավելի մեծ ցանցի ստեղծմանը՝ հետազոտական գործունեությունը շարունակական մշտադիտարկման և ռիսկերի վերլուծության գործընթացներին կապելու համար:

«Մեկ առողջության» շրջանակում անցկացվող հետազոտությունների և գնահատումների արդյունքների ժամանակին, թափանցիկ և լայնամասշտաբ հրապարակման ապահովումը առավելագույնի կհասցնի Հայաստանի հնարավորությունները՝ ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ այլ երկրների հետ կիսվելու իր հաջողության պատմություններով, քաղած դասերով և լավագույն փորձով: Տեղեկատվության հոսքի և իրազեկվածության բարձրացումը կնպաստի նաև Հայաստանի հնարավորություններին՝ փոփոխություններ իրականացնելու և ամրապնդելու «Մեկ առողջության» շրջանակում անցկացվող գործընթացները⁴²:

Վայրի բնության հիվանդությունների մշտադիտարկման ընդլայնումը ներառում է հաշվետվությունների ֆունկցիոնալ համակարգի և տեղեկատվության հոսքի մշակում համապատասխան մարմինների հետ՝ պաշտպանվող և պահպանվող տարածքներում/տարածքների մոտակայքում վայրի բնության տեսակների հիվանդությունների դեպքերի համար:

Վայրի բնության կենսամիջավայրերի և տեսակների հարստության մասին տվյալները կարող են օգնել իշխանություններին ճանաչելու որոշակի աշխարհագրական տարածքներ կամ տեսակներ, որտեղ հիվանդության բռնկումները կարող են ավելի հավանական լինել: Այսպես կարելի է կրճատել բռնկման արձագանքման ժամանակը և ավելի լավ թիրախավորել ռեսուրսները:

Վայրի բնության հսկողության հնարավորությունների զարգացումը կարող է արդյունավետ մեխանիզմ լինել՝ հետազայում Հիվանդությունների համալիր ինտեգրված էլեկտրոնային հսկողության համակարգի (EIDSS) կամ տեղեկատվության փոխանակման այլ համակարգերի միջոցով «Մեկ առողջության» գործընթացները և միջոլորտային տվյալների փոխանակումը մարդկանց և կենդանիների առողջության հսկողության գործընթացին ինտեգրելու համար:

Իրականացնել աշխատուժի պլանավորում և համեմատական վերլուծություն՝ նպաստելու աշխատուժի զարգացման ռազմավարությանը, որն աջակցում է բազմաոլորտային գնահատմանը և գործողություններին՝ կապված երկրի հիմնական ռիսկերի և խոցելիության հետ:

Ընդլայնել համատեղ աշխատանքային ուսուցումը անասնաբույժների, շրջակա միջավայրի առողջության մասնագետների, համաճարակաբանների և այլ մասնագետների հետ, որոնք աշխատում են մարդ-կենդանի-շրջակա միջավայր օղակի առողջության լանդշաֆտում (օրինակ՝ Դաշտային համաճարակաբանության և լաբորատոր ուսուցման ծրագիրը (FELTP)), ներառյալ անասնաբույժների վերապատրաստումը «Մեկ առողջության» ասպեկտների և շրջակա միջավայրի առողջության փորձագետների վերապատրաստումը շրջակա միջավայրի պահպանման և զոռնոգ հիվանդությունների առաջացման գործում դրա ունեցած դերի թեմայով:

Կարող է շահավետ լինել մեկ Առողջության հասուկ վերապատրաստման դասընթացներ կամ մոդուլներ մշակել բարձրագույն ուսումնական հաստատություններում, ներառյալ ԵՊՀ-ում, ՀԱՀ-ում և Առողջապահության ազգային ինստիտուտում: Օրինակ, կենդանաբանությունը ներկայումս ՀԱՀ-ի անասնաբուժական ուսումնական ծրագրի մաս չէ, ինչը խանգարում է անասնաբույժներին հասկանալ զոռնոգներ և վայրի կենդանիներ միջև կապը:

Իրականացնել հիվանդությունների ռիսկերի ենթազգային գնահատում և քարտեզագրում

Ռիսկերի աղբյուրների մասին պատշաճ պատկերացումը և ռիսկերի նվազեցման միջոցառումների առաջիադացումը կհանգեցնեն գյուղատնտեսության և առողջապահության ոլորտներում համատեղ օգուտների, ինչպես նաև ավելի լայնամասշտաբ կայուն զարգացման:

Անհրաժեշտ է առաջնահերթություն տալ պլանավորմանը ենթազգային մակարդակում՝ աջակցելու «Մեկ առողջության» համակարգմանը, այդ թվում՝ ախտորոշման, ստուգման, իրազեկման, ստանդարտ գործառնական ընթացակարգերի և աշխատուժի համապատասխանեցման համար:


Մետատվյալների բարելավված չափորոշիչներ ու չափանիշներ նվազագույն անհրաժեշտ տվյալների համար, որոնք անհրաժեշտ են հարթակներում «Մեկ առողջության» կամ կենսահսկողության տվյալների փոխանակման համար



16 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը նկատելի առաջընթաց է գրանցել «Մեկ առողջության» ռազմավարության ընդունման և կիրառման գործում, նույնիսկ եթե աշխատանքները մինչ օրս եղել են ոչ պաշտոնական և ուղղված են եղել առաջնահերթություն համարվող կոնկրետ հիվանդություններին: «Մեկ առողջություն» բազմաոլորտ մոտեցման հետագա ամրապնդման հարցում մեծ հետաքրքրվածության պայմաններում, հատկապես տեխնիկական մակարդակով, Հայաստանը հնարավորություն ունի լինելու «Մեկ առողջության» ոլորտի առաջատարը կովկասյան տարածաշրջանում: Ստեղծելով «Մեկ առողջության» հարցերով զբաղվող ազգային մարմին և ընդլայնելով ամենօրյա և ճգնաժամային իրավիճակներում իրականացվող գործողություններում ներգրավված ոլորտների ու շահագրգիռ կողմերի թիվը՝ Հայաստանը կխթանի տարբեր ոլորտների միջև հաղորդակցությունը, համակարգումը,

համագործակցությունը և կարողությունների ամրապնդումը՝ հանգեցնելով մարդկանց, կենդանիների և շրջակա միջավայրի առողջության բնագավառում ավելի արդյունավետ համակարգերի: Աճում է նաև միջազգային գործընկերների և դոնոր կազմակերպությունների հետաքրքրությունը դեպի «Մեկ առողջության» գործարկումը՝ որպես COVID-19-ից վերականգնողական աշխատանքի և համավարակի ընդհանուր կանխարգելման և պատրաստվածության մաս: «Մեկ Առողջության» նախաձեռնությունների աջակցությունը Հայաստանում զգալի տարածում է գտել վերջին մի քանի տարիների ընթացքում: «Մեկ առողջության» մոտեցումների ընդլայնումը կենսահսկողության և կենսապաշտպանության պրակտիկայի, գնահատման, կարգավորման և համակարգման մեջ հետագայում կխթանի երկրի առողջությունն ու անվտանգությունը:



17 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Zhou P, Yang X-L, Wang X-G, Hu B, Zhang L, Zhang W, et al. A pneumonia outbreak associated with a new coronavirus of probable bat origin. *Nature*. 2020;579(7798):270-3.
2. Keele BF, Heuverswyn FV, Li Y, Bailes E, Takehisa J, Santiago ML, et al. Chimpanzee Reservoirs of Pandemic and Nonpandemic HIV-1. *Science*. 2006;313(5786):523-6.
3. Holmes EC, Goldstein SA, Rasmussen AL, Robertson DL, Crits-Christoph A, Wertheim JO, et al. The origins of SARS-CoV-2: A critical review. *Cell*. 2021;184(19):4848-56.
4. Pekar JEa, Magee Aa, Parker Ea, Moshiri Na, Izhikevich Ka, Havens JLa, et al. SARS-CoV-2 emergence very likely resulted from at least two zoonotic events. 2022.
5. Jones KE, Patel NG, Levy MA, Storeygard A, Balk D, Gittleman JL, et al. Global trends in emerging infectious diseases. *Nature*. 2008;451(7181):990-3.
6. Morse SS, Mazet JAK, Woolhouse M, Parrish CR, Carroll D, Karesh WB, et al. Prediction and prevention of the next pandemic zoonosis. *The Lancet*. 2012;380(9857):1956-65.
7. Heymann DL, Chen L, Takemi K, Fidler DP, Tappero JW, Thomas MJ, et al. Global health security: the wider lessons from the west African Ebola virus disease epidemic. *Lancet*. 2015;385(9980):1884-901.
8. Karesh WB, Dobson A, Lloyd-Smith JO, Lubroth J, Dixon MA, Bennett M, et al. Ecology of zoonoses: natural and unnatural histories. *Lancet*. 2012;380(9857):1936-45.
9. Allen T, Murray KA, Zambrana-Torrel C, Morse SS, Rondinini C, Di Marco M, et al. Global hotspots and correlates of emerging zoonotic diseases. *Nature Communications*. 2017;8(1):1124.
